



Խ.ԱՐՈՎՅԱՆԻ  
ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

*Արդյանագիտական  
Հայագիտական-հասարակական-  
քաղաքական հանդես*

**N1**

**2012**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Մուտք* ..... 3

*Ողջույնի խոսք* ..... 4

**ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.**

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ (Ճեմարանական դիսկոտագիա) ..... 8

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ.**

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ ԻՐ ԼՈՒԾՈՒՄԸ ..... 11

**ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ.**

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ (Փաստաթուղթերու լոյսին տակ) ..... 15

**ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՈՆՑ.**

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԵՎՐՈՒՄ ..... 19

**ԵՐԿԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.**

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՌՈՑ ԿԵՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՏՈՀՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 26

**Գ.ԱԲՈՎ.**

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆԵՂՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ ..... 31

**ՈՌՈՒԲԵՆ ՄԱՆԱՍՅԱՆ.**

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԳԵՐԵՁՄԱՆԸ ԱՆՈՏՍԿՈՒՄ ..... 35

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ.**

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ ԿԱՏԱՐԱԾ ՃԱՆԱԿԱՐԴՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ..... 39

**ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ.**

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ» ..... 41

**ՎԱՀԱՆ ԹՈՒԹԻԿՅԱՆ.**

ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ..... 45

**KH.ABOVYAN.**

AMWUZING SHORT STORIES ..... 49

**ՍԱՍՎԵԼ ԿՈՍՅԱՆ.**

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԽՃԱՆԿԱՐ ..... 54

**ԿԱՄ ՂԱՐԱԲԱՂ, ԿԱՄ ՄԱՀ.**

ՔՆՆԱՐԿՈՒՄ ՎԱՇԻՆԳՏՈՒՆԻ ՎՈՒԴՈՒ ՎԻՆՈՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ..... 68

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՍՏԻԿՅԱՆ.**

«ՄԵԾ ՍԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԸ» ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԹՈՒՐՁԱԿԱՆ «ՄԵԾ ՆԱԽԱԳԻԾԸ» ..... 73

**ՄՈՒՏՔ**

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

Հայկական հարցը հայոց պատմական ճակատագիրն է: Ծնունդ առնելով հայ ժողովրդի կազմավորման հետ միաժամանակ՝ այն անցել է դարերի փորձությունների միջով և ձևավորվելով իբրև կոտ ուսմունք՝ դարձել հայ ազգային գաղափարախոսության հիմքը:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն ունի իր գերխնդիրը: Պատմականորեն ձևավորված այս երևույթը քնակաճուն լուծում է ստանում այն պարագայում, երբ ժողովուրդն ապահովված է իր գոյության պահպանության հզոր միջոցով՝ պետականությամբ, որը հնարավորություն է տալիս լուծել ոչ միայն գերխնդիրը, այլև բացառել մարդկային ու տարածքային կորուստները: Այդ պայմաններում համաչափորեն ձևավորվում և ամրադրանում է մակ պետականության հիմքը՝ ազգային գաղափարախոսությունը:

Այն ժողովուրդները, որոնք կրել են պատմության դաժան հարվածները, կորցրել են պետականությունը, զրկվել են մակ ազգային գերխնդիրը լուծելու հնարավորությունից: Նրանց բաժին է հասել գոյապահպանության դժվարին խնդրի լուծումը:

Իր բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովուրդը ազգային գոյապահպանության համար պայքարել է մի քանի ճակատներով և անողոր ժամանակներում, ճնշման ու հալածանքների, կոտորածների ու գաղթի պայմաններում ավարտուն տեսքի բերել ազգային գաղափարախոսությունը:

Հայոց պատմության տարբեր ժամանակահատվածներում ձևավորվեցին ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ մասերը՝ Հայրենիք, ազգային ու պետական մտածողություն հասկացությունները, դրանց հանրագումար Հայկական հարցը, որը ազգային գաղափարախոսության հիմքն է:

Հայ պատմագրության տարբեր սերունդների ներկայացուցիչներ են անդրադարձել Հայկական հարցին: Մակայն, դժբախտաբար, հայ ժողովրդի հերոսական ոգորումների հանրագումար խնդիրը չի ենթարկվել գիտական խոր ուսումնասիրության, որն այսօր դարձել է հրամայական պահանջ, որովհետև անհրաժեշտություն է դառնում ազգային գաղափարախոսության բարձրակետի՝ քաղաքական հայագիտության խոր ու բազմակողմանի մշակումը, որը ոչ միայն քաղաքական աշխարհաճանաչման, արտաքին քաղաքականության հիմքն է, այլև հայոց պետականության դիվանագիտական գործունեության մարտավարության ու ռազմավարության բանալին, մի հզոր գործոն, որը եթե ոչ բացառում, ապա նվազեցնում է սխալվելու հավանականությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ  
И НАУКИ  
МИНИСТР  
REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION  
AND SCIENCE  
MINISTER

ՊՆԹ: Երևան, Գլխավոր պալատ, Կոստյուկովի տուն 3, Հեռ./Փոս./Բեռ: 52 86 02, Զեքր./Փոստ./Բեռ (374 10) 52 73 43.  
ՊՆԹ: Yerevan, T'ameb' palatani, Dom Kostyukovits 3, 0016, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

ԺԳ \_\_\_\_\_ 200

ՑՄՆ ՀՆԻՊԻՑՆԻ

Գնահատելի է խաչատուր Արուսեանի տուն թանգարանի «Հայկական հարց» խորհրդանշական խորագրով հանդես հրատարակելու նախաձեռնությունը, ինչը, վստահ եմ, նոր թովանդակություն կհաղորդի հայազիտության և Հայկական հարցի լուսարանման գործին: Ելնելով աշխարհաքաղաքականացման ներկա իրողություններից, օրվա հրամայականն է հնարավորինս հանգամանորեն և անբողականորեն աշխարհին ներկայացնել մեր ժողովրդի պատմական և հոգևոր արժեքները, առավել հետևողականորեն ներգրավվել հայկական հարցի դրական լուծման, ազգային նկարագրի ու ինքնության պահպանման գործընթացներին: Կարծում եմ, հանդեսի աշխատակազմն ու հեղինակներն ի զորու են իրականացնելու իրենց ծրագրերն ու նպատակները, ուստի «Հայկական հարց»-ին մաղթում եմ բարի երթ, իսկ ստեղծագործական անձնակազմին բազում հայրենանվեր մտադրացումներ:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ  
ԴԴ ԿԳ ՆԱԽԱՐԱՐ

ՑՄՆ ՀՆԻՊԻՑՆԻ

Հայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում երբեք չի անտեսել անցյալը գնահատելու, վերլուծելու անհրաժեշտությունը:

Հայացք հառելով կորուստներով ծանրաբեռնված անցյալին՝ հրամայական է դառնում մեր այսօրն ու վաղը ծրագրելը: Այդ ուղղությամբ ցանկացած քայլ ներդրում է քաղաքացիական հասարակության ձևավորման, հայրենիքի նկատմամբ պատասխանատվության բազմապատկման ուղղությամբ:

Լիահույս եմ, որ Խ.Արուսեանի տուն-թանգարանի «Հայկական հարց» ամսագիրն իր ավանդը կրերի թե՛ Մեծ լուսավորչի կյանքի ու գործունեության լուսարանմանը, թե՛ հայազիտական ուսումնասիրությունների զարգացմանը:

Մեծ սպասելիքներով բարի երթ եմ մաղթում տուն-թանգարանի նախաձեռնությանը, վստահ, որ այն բարեհաջող կիրականացնի իր առաքելությունը:

ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆ  
ՀԿ նախագահի տեղակալ  
ԱԺ ՀՀԿ խմբակցության ղեկավար

Արվյանագիտական, հայագիտական հանդես... մեծ  
ու պատասխանատու նպատակադրում...

Կարծում եմ, գործող լրատվամիջոցների առկայու-  
թյան պայմաններում, այո, կա նման հանդեսի անհրա-  
ժեշտությունը:

Չշտապենք, կյանքը, ժամանակը ցույց կտան, թե  
«Հայկական հարցը» ինչքանով է հավատարիմ իր կոչ-  
մանը, իր նվիրումին: Սակայն անվիճելի է, որ նրա  
երևան գալը սպասելի էր...

Բարի երթ մաղթենք նոր հանդեսին և սպասենք նրա  
ազգանվեր գործունեությանը:

**ԿԻՐՈ ՄԱՆՈՅԱՆ**

**ՀՅԴ քյուրոյի**

**Հայ Դպրի պարասխանագրու**

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ռոջանում եմ նոր հասարակագիտական հանդեսի ծնունդը: Առանձնապես  
կարևորում եմ այն հանգամանքը, որ հանդեսն անդրադառնալու է Հայկական Հարցի  
հետ կապված խնդիրներին: Մեր օրերում հայագիտության այս կարևոր ոլորտի  
ոստանափրումը ստանում է քաջացուցիչ նշանակություն, քանի որ համայն հայության  
կողմից գնալով ավելի հստակ են դրվում պատմաքաղաքական և արդարության  
վերականգնման հարցերը:

Մեր ժողովուրդն ունի հարուստ, դարերի խորքից եկող ավանդույթներ  
հումանիտար հետազոտությունների ոլորտում: Հույանք, որ սույն նորաստեղծ հանդեսը  
հաջողությամբ կշարունակի այդ ավանդույթները՝ իր լուսնան ներդրելով  
արվյանագիտության և Հայկական Հարցի ոստանափրման քաղաքականությանը:

ՀՀ ՊԱՆ ԱՐԵՎԵԼԼԻԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍԻՏՈՒՄԻ ՏՆՕՐԵՆ

ՀՀ ՊԱՆ ԹՂԵՍԻԿԻՑ ԱՆՂԵՄ, Պ.Գ.Դ. ՊՐԻՏԵՆՈՐ

ՈՒՂԵՆ ԱՆՅՐԱՍՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ



ՆԵՐՍԷՍ ԲԱՅ. ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

Ճեմարանական դիւէրփացիա՛

Խաչատուր Արովեանի փոհիւր:  
Խաչատուր Արովեանը ծնունել է «1804-1805թ.» Բանաքեռ գուր հա-  
յարևակ գիւղում, Երևանից 5 վերայ հեռաւորութեան վերայ դէպի հիւսիս, Արովեան յայտնի գերդաստանից:

Խաչատուրի նախահայր Արովը («եօթներորդ ազգ») Լազիստանի կողմերից էր. սակայն Կովկասի լեռ-  
նաբնակների հարստահարութիւննե-  
րին և նեղութիւններին դիմանալ չկա-  
րողանալով՝ թողնում է իր բոլոր ան-  
շարժ կայքը, անելորդ շարժականը, մի  
քանի ընդամեններով և իրենց մարդ-  
կանցով գալիս է Երևանի Սարդարի  
մօտ պաշտպանութիւն և հովանաւոր-  
ութիւն գտնելու: Սարդարն ուրա-  
խութեամբ ընդունում է և բնակութե-  
ան տեղ տալիս Բանաքեռ գիւղում:  
Արովն իշխանական ցեղից լինելով  
(մեկիք)՝ արժանացավ Սարդարի  
առանձին հոգատարութեան և իրա-  
ունքների, որոնց համար և ստացան  
հասարակական թղթերը:

Այն բոլոր վկայաթղթերը, որոնք  
հասարակում էին Արովեան ցեղի մե-

կորութիւնը, ենթարկուել են ժամանա-  
կի աներիչ ժակիքներին:

Թղթերը պահուել են մինչև 1825թ.  
ռուս-պարսկական պատերազմները:  
Այդ թուին հայազն գեներալ Մնրապե-  
անը հասարում է հայերի իշխանա-  
կան դոկումենտները Պեդերբուրգում  
կայսերական հրամանով հաստատել  
տալու համար, սակայն այդ թղթերի  
հետ իսպառ կորչում է Արովեան փոհ-  
մի մեկիքութիւնը: Ինչպես շարքերն,  
այնպէս և Արովեանները սպասում  
են, որ յետ կը ստանան:

Արովեան ցեղի շառաւիղներն  
այժմ կան Թիֆլիսում, Ղարաբաղում  
և Լոռում:

Մանրամասն տեղեկութիւններ  
Արովեանի ճիւղագրութեան համար  
պակասում են, միայն յայտնի է, որ  
Արովի որդի Վիրապն էր, Վիրապի  
որդին էլի Արով, որից ծագել է մեր  
քանապարհը:

Արովեանի նախնիք նշանաւոր և  
յայտնի են եղել իրենց բարեգործու-  
թեամբ, առաքաչեռնութեամբ և հի-  
րասիրութեամբ. իբրև հայ մարդ՝

սրանք պահպանել են հայի այդ  
դարերը գեղեցիկ սովորութիւնը, որի  
համար Բենեֆոնը Բրիտանացի  
առաջ շար հրճումներով է խօսում:  
Նոյն իսկ Խաչատուր Արովեանի  
վկայութեամբ իր նախահայրը բարի,  
հիւրասէր և երեւելի է եղել: «Հարիւր  
տարի կըլի, որ լուսահոգի Արովը մե-  
ռելիս, էլի նրա ողորմին հա կայ, հա  
կայ: Թուրք ու հայ նրա գերեզմանովն  
են օրթում ուրում: Ծամփի վրի մեծ  
իքոն անունը-Հնդկական ա հասել, են  
ջարդահ բաղը իր ջեռովը փնկեց, որ  
անց կենողը գայ նրա բարութիւնը  
վայելի: Չորս կատուական ամեն առա-  
օպ՝ ինչ ծառիցը վեր էր ընկնում, հա-  
ւարում, քրոցներով փանում էին ճամ-  
փին դնում ու անց կենողի ջերն ու  
խորքիւր լցնում: Էն մեշայ իրուցը  
մէկ պտուղ, մէկ քաս գինի իրանց  
փանը չէին քանկեցնիլ: ջոկ կը պահէին  
ու աղքատ գեղըցոցը կը բաժանէինն:  
(Վ չ. 32 երես):

Արովի մասին գերմանացի ճանա-  
պարհորդ Հակապիստուզեն անելի  
մանրամասն է գրում:

«Բանաքեռի բոլոր հասակաւոր  
բնակիչները պարծանքով յիշում են  
իրենց համագիւղացի Արովեանի պա-  
պին, որը մի բարձրահասակ, գեղեց-  
կաբեւի, ջանով, բարեգործ, մարդա-  
սէր, շար կալուածների տեր էր, մարդ  
էր և յարգում էր հայերից, թուրքե-  
րից և պարսիկ մեծամեծերից: Բացի  
բոլոր կալուածներից և այգիներից մի  
մեծ այգի էլ ուներ այն ճանապարհի  
վրայ, որ փանում է Երևանից Թիֆ-  
լիս: Նրա մէջ կային երեք չորս այգե-  
պաններ. այգու բոլոր պտուղները  
օտարներինն ու ճանապարհորդնե-  
րինն էր. միշտ նրա դուռը բաց էր, որ  
ով որչափ ուզում է՝ ուրի, փանի հա-  
զարաւոր մարդ էր մտնում ու դուրս  
գալիս: Բացի այն՝ որ փանում էին  
այլ և քրոցների մէջ լցնում էին ու

դնում ճանապարհի վրայ, որպէս զի  
մի որևէ օտարական, որ գուցէ բոլոր-  
ովին տեղեկութիւն չունի այգուց և  
գալիս անցնում է, ուրի և վերցնի այն-  
տեղից, որքան կարող է: Ինչպէս որ  
այգին, այնպէս էլ փունն էր. շար քիչ  
կը պատահէր, որ այդ ճանապարհով  
մէկն անցներ ու չմտներ նրա փունը:  
Ս. Էջմիածնի կաթողիկոսի իջեանը,  
կախկոպոսների և հոգևորականնե-  
րի կացարանն այստեղ էր: Արովեա-  
նի պապը փարեց փարի ուխտի և  
երկրպագութեան էր գնում իր բոլոր  
ընկերակիցով Էջմիածնի սուրբ վայրե-  
րին»:

Հակապիստուզենը դէպքից օգուր  
քաղելով Արովեանի նախահոր գովքն  
անելուց՝ յիշում է այն գեղեցիկ սովոր-  
ութիւնը, որ հայերն ամեն կողմերից  
հասարում էին Ս. Էջմիածնի Հայաս-  
տանի կրօնում փնկուած լուսարու  
Փարոսի ծոցում ուխտ անելու, մադ-  
քանքներ վերառարում առ Բարձրե-  
այն և ի հաստատութիւն նրա հրաշա-  
կերտ փառքի նուէրներ քերում: Այս-  
պէս էր անում և Արովեանի նախա-  
հայրն իր ընկերակիցով ու դառնալով  
երկիւղածութեամբ, բարեպաշտութե-  
ամբ և արտասուրով պատմում էին,  
թէ ինչպէս փեսան սուրբ փառարը,  
եկեղեցու կենդանուր, իջման տեղը. թէ  
ինչպէս կաթողիկոսն օրհնեց նրանց  
իր աջը դնելով նրանց գլխին, և  
իրենք էլ համարուել են նրա ծունկը.  
թէ ինչպէս գինու օրհնած բաժակն  
ընդունեցին և սուրբ նշխարը վայելե-  
ցին:

Թէ յիշաւի ինչ փառաւոր ուխ-  
տագնացութիւն էր Արովեանի ծնող-  
ների երթը դէպի ս. Էջմիածն, կրկին  
պիտի դիմել գերմանացի ճանապար-  
հորդին: Չնրմանաւոր սրտերի այդպի-  
սի քաղցր արտայայտութիւնը մի օրի-  
նակի դաս լինելուց գալով՝ մի նշա-  
նաւոր իրողութիւն է, որ այնքան գե-

ԱՐՈՎԵԱՆԻ ԳԵՂԵՒՆՆԵՐԸ

ԱՐՈՎԵԱՆԻ ԳԵՂԵՒՆՆԵՐԸ

ՆԵՐՍԷՍ ԲԱՅ. ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԾՆ ՈՒ ԻՐ ԼՈՒԾՈՒՄԸ

Երևակայիցիք, թե քանի փարի է ինչ որ դուք ծանոթ եք մի նշանավոր մարդու, որա համար էլ չեզ համարում են քանի փարիկան, միևնչյե 50 կամ 60 փարիկան եք դուք:

Մրա նման մի քան է, որ սովորաբար ասում են 35 փարի է, ինչ գոյություն ունի հայկական հարցը, որովհետք 35 փարի է, որ դրված է եվրոպական դիվանագիտության առջև և էլ էլ հաշվում են Բեռլինի դաշնագրության օրից:

Մի հիմնական սխալ, որ մարդկանց մտածողությունը սահմանափակելով էս 35 փարվա ժամանակի ու դեպքերի շրջանակում, պարզապես դառնում շար սխալների:

Մակայն, եթե ազարվենք էդ մեծ սխալից, հարցին նայենք ավելի մեծ փարածության վրա, հեշտ էլ կնանայենք նրա բնավորությունը, ավելի հաջող էլ կմտրենանք նրա բանական ու բնական լուծման հնարավորությունը:

Եվրոպական դիվանագիտության համար, այո՛, 35 փարի է, ինչ որ գոյություն ունի հայկական հարցը, քայց մեզ համար էլ հո էդպես չի, 35 փարի չի, ինչ որ գոյություն ունի նա:

Երկրորդն էլ մեր հարցը Բեռլինից չի սկսվում և եվրոպական պետու-

թյունները չեն դրել, այլ Ման-Ստեֆանոյից է սկսվում և ռուսներն են առաջին անգամ հայկական հարցը մտցրել միջազգային խնդիրների շարքը:

Էս երկու նշանարության մշտապես հիշելը շար է կարևոր և շարքան են ասում սրանք:

Հայկական հարցը շար է հին: Իր ամբողջությամբ նրան մեզանում քչերն են ծանոթ ու րեղյակ: Նա իր սկզբնական շրջանում զուր քաղաքական խնդիր էր և հետամուտ էր չեռք բերելու հայի կորցրած քաղաքական անկախությունը: Բայց ժամանակի ընթացքում ջախջախվեց ինքը՝ հայ ժողովուրդը, ջախջախվեցին նրա ուժերն ու հույսերը ու իջնելով, իջնելով պարսկական ու փանկական բռնակալության փակ՝ պահանջը հասավ միևնույնի: Եվ էսօր նա հանդես է գալիս արդեն լոկ որպես քաղաքական ազատության խնդիր, որ իր պահանջը վերջիվերջո չնակեպում է էսպես կյանքի, գոյքի, պարվի և կուլտուրական զարգացման ապահովություն:

Թե հայոց հարցը քաղաքացիական խնդիր է, ոչ թե քաղաքական, էդ լավ գիրեն թե՛ Եվրոպայում, թե՛ Տաճկաստան և թե՛ Ռուսաստան, և հայոց սեպարատիզմի առասպելին լուրջ

Նրանցից ոմանք հենց ծանոթ էին լինում: Իրարանջիւրը կամենում էր փանել իր սենեակը: Կաթողիկոսն էլ հրամայում էր իսկոյն իրեն մօտ բերել: Երբ որ սենեակ էին մտնում, սպիտակափառ այեզարդ ծերունի կաթողիկոսը վեր էր կենում րեղից, գիրկն էր առնում իր վաղածանօթ հիրին ասելով՝ »Ողոյն, որդեակդ իմ, պայծառութիւն եկեղեցոյ մերոյ, և հասպարտութիւն վանիցս, ողոյն քեզ, քոյրիկ, հասարարիմ դուստր եկեղեցոյ, օրինեսցէ զքեզ Տէր Աստուած և Լուսաւորիչն հոգոց մերոց յամենայն ժամ օգնական և պահապան եղիցի քեզ, զի ոչ մոռացար զմեզ մեղաւորս և դուք անմեղ մանկունք իմ, ծաղիկ զարնան, զօրացարտք շնորհիւ Տեառն, եկայք նստիցոյք և ուրախացոյք, զի փափագելով փափագէի րեւութեան չերոյ»: Յետոյ նրանց հետ նստելով խոսում էր ազգի, եկեղեցոյ և ընդհանրական-րեւութեան զանազան խնդիրների վրայ:

«Ծառ բարի պտուղ բարի առնէ» աստուածային խօսքն իր ամբողջ էութեամբ քազաւորում է այսպեղ: Այսպիսի ընդհանրից է ծնում Խաչապուր Արովեանը, պապերը «պայծառութիւն եկեղեցոյ և հասպարտութիւն վանիցս (Էջմիածնի)», փարերը «հասարարիմ դուստր եկեղեցոյ»:

Բարեպաշտ ծնողների, ջերմեռանդ հօր և մօր միակ փափագն ի՞նչ կլինի, եթէ ոչ կրթել քնքոյշ սիրով իրենց զաւակներին բարոյական և կրօնական ուղղութեան մէջ: Կրօնաւէր ընդհանրի միակ ցանկութիւնն ի՞նչ պիտի լինէր, եթէ ոչ նուիրել իրենց անդրանիկ զաւակն Աստուծոյ սեղանին, «բանի վարդապետութեան», ուստի սկզբից և եթ վճռում են մանուկ Խաչապուրին փայ կրօնաւորութեան:—

ՄԱՅՈՒՆ ԿՐԻՍՏՈՍ

դեցիկ կերպով երևում է նրանց շատաիդ հայ վիպագիր, մանկավարժ և մեծ հայրենասիրի մատաղ սրտի քնքոյշ զգացմունքների վրայ: «Ծառն ի պտղոյ իւրմէ՛ մանայի» և յիրաւի այսպիսի մի նշանաւոր խօսքի նշանարութիւնը պարզում է, եթէ միևնչյե անգամ վկայութիւն չունենայինք, երբ րեանում ենք մանուկ Խաչապուրին իրելիսար երիտասարդ, արրունքին հասած ժամանակ-եռանդով լի, գործունէութեան դաշտում-անվիսար ուսուցիչ և արդակարգ աշխատասէր:

Արովեանի նախահայրերը մեծ շուքով էին կարարում իրենց ուրեւազանցութիւնը: «Խաչապուր Արովեանի ասութեամբ իր պապն երկար ժամանակ պարտաստութիւն էր րեանում և Էջմիածին գնալու համար, իր որդոց (մէկը 7, միւսը՝ 9 փարեկան) համար իրարանջիւր փարի նոր շորեր էր պարտաստում մէկ փարի՝ ծիրանի, միւս փարին կանաչ, երրորդ փարին կապոյտ, չորրորդ փարի՝ դեղին և այլն: Նրանց ուրնամանները կանաչ էին, որ միայն մեծաբան որդիներն էին հազնում, զօրիկից դաշոյն էին կապում, մէջքին՝ փոքրիկ սորեր և նստեցնում էին նժոյգ չիու վրայ: Երկու-երեք չի էլ բեռնաւորուած՝ րանում էին զանազան րեսակ պարզեներ: Արովեանի փարը և պապը նստելով զարդարած չիերի վրայ՝ առաջ էին գնում, իսկ նրանց երեկոց՝ մեծ քազմութիւն: Գիւղերի ժողովրդականները նրանց րեսնելուց՝ ասում էին՝ «սիս մի բարեպաշտ մարդ, որ կրկին ուրաք է գնում մի՞թէ նրանից անելի ուրաք սիրող մարդ կայ»: Եւ հենց որ մտրենում էին վանքի դռներին, իսկոյն վանական եպիսկոպոսները, վարդապետներն առաջ գալով ընդունում էին նրանց: Կային այնպիսիները, որ կաթողիկոսի կողմից էին զայիս ընդունելու համար

ՄԱՅՈՒՆ ԿՐԻՍՏՈՍ

մարդիկ չեն հավատում: Ռուս հայր-  
նի գեներալ Ֆադեևը իր «Армянская  
народность» աշխատության մեջ,  
հերքելով հայկական սեպարատիզ-  
մը, որպես քաղաքական ուղղություն,  
ասում է՝ եթե մինչև անգամ դրսից էլ  
օգնություն սրանա, դարձյալ անհրա-  
զորձեիլ բան է դա:

Եվ էսպես ամենքի համար նա է և  
մնում է կյանքի, գոյքի, պարվի ու  
կուլտուրական զարգացման ապահո-  
վության պահանջ:

Արդ, ո՞րտեղ և ո՞ր օրից գոյու-  
թյուն ունի հայկական հարցը՝ իր անբ-  
կա բնավորությամբ:

- Էն օրից, ինչ որ վրանգվել է հայ  
ժողովրդի կյանքը, գոյքը, պարվին  
ու կուլտուրական զարգացումը: Եվ  
գոյություն է ունեցել Պարսկաստա-  
նում, գոյություն է ունեցել և ունի Տաճ-  
կաստանում: Գոյություն չունի և չի ու-  
նեցել Ռուսաստանում, թեկուզ իշխան  
Գոլիցինի օրերում: Ընդհակառակը,  
հայ ժողովուրդը միշտ նայել է Ռու-  
սաստանի վրա որպես իր խնդրի  
ավանդական պաշտպանի վրա:

Դեռ 18-րդ դ. սկզբում, Օրին, հա-  
յոց բարձր հոգևորականությունն ու  
մեյիթները բանակցության մեջ էին  
Պեթալցի գերմանական կուրֆյուրստ  
Հովհան Վիլհելմի հետ և, առաջարկե-  
լով Հայաստանի իշխանությունը,  
խնդրում էին նրան ազատել իրենց  
երկիրը պարսկական բռնակալու-  
թյունից, գերեվարություններից, կո-  
տորածներից, կեղեքումներից ու  
առեանգումներից:

Ուրեմն էն ժամանակ գոյություն  
ունեի հայկական հարցը Հայաստա-  
նի պարսկական մասում և կոչվում էր  
պարսկահայկական հարց: Եվ դեռ էն  
ժամանակ էր, որ գերմանական  
կուրֆյուրստը, թեև ցանկանում էր օգ-  
նել հայերին, հայրենից, թե կիրոպա-  
կան պետությունները հակամարտ  
շահեր ունեն Արևելքում՝ Պարսկաս-  
տանում ու Տաճկաստանում, չեն միա-  
բանել հայկական հարցի վրա, վերջը՝

թե հայ ժողովրդի փրկությունը չի կա-  
րող զուրի գալ առանց Ռուսաստանի:  
Խորհուրդ Կովեց դիմել Ռուսաստան,  
Պետրոս Մեծին: Ըստ շուրտի փորձն  
ու գործն էլ ցույց տվին, որ միայն  
Ռուսաստանը կարող էր վճռել խնդի-  
րը: Եվ թե՛ Օրին ու հայ հոգևորակա-  
նությունն ու մեյիթները, թե՛ հայ ժողո-  
վուրդը էն օրվանից երեսներն արին  
դեպի Ռուսաստան: Եվ ընդմիջյո դե-  
պի Ռուսաստան: Մինչև էսօրվան  
օրը:

Ռուսաստանը էն միակ մեծ պե-  
տությունն էր, որ անվերադառնալի  
վճռած, իր պարսկական հարվածներն  
ուղղել էր Պարսկաստանի, բայց մա-  
նավանդ Տաճկաստանի վրա, և ու-  
զում էր մի կողմից Ցարգրադի դար-  
պասի ճակատին կախել իր վահանը,  
մյուս կողմից իջնել, դուրս գալ Պար-  
սից ծոցը: Էսպես, ճանապարհն ուղիղ  
Կովկասի վրով, բուրքին ու պարսկին  
հզոր սխոյան, այլևս քրիստոնյա ու  
անհամեմատ ավելի բարձր իր քաղա-  
քակրթությամբ: Եվ հայ ժողովուրդը,  
բազմապատկեր Վրաստանի հետ միա-  
սին, ապավինեցին նրան: Իսկ Կով-  
կասը, իր բարեկամ ժողովուրդներով,  
Ռուսաստանի համար թե՛ բազմա-  
կան, թե՛ փոքրասկան փոսակներից  
հանդիսանում էր միակ ու հասարա-  
պուն կովանը Արևելքում: Էսպեսով էլ  
երկուսերը դաշն ու հավատարմու-  
թյունը ապահովված էին վերին սա-  
րհմանի կենսական ու հասարակու-  
նային կապերով:

Եվ ահա.

“От Урала до Дуная,  
До большой реки,  
Колыхаясь и сверкая,  
Доизжуются полки...”

Идут все полки, мозгуи,  
Шумны, как поток,  
Страшно-медленно, как тучи,  
Прямо на восток”.

(ЛЕРМОНТОВ)

ՊՆՏՈՒՄ Թ ՈՂՈՒՄԻՆ

Եվրոպական մեծ պետություննե-  
րը կուզենան և նրանք են կարող:

Նրանք են միշտ պաշտպանել  
թուրքին ռուսի դեմ և կարող է պարս-  
հել, որ նորից նրանք պաշտպանեն:

- Արդյոք թուրքի սիրո՞ւց:

- Ո՛չ:

- Գուցե հայերին մարտավայել օր  
ու կյանք տալու համա՞ր:

- Երբե՞ք:

Իրենց շահերի և հարկապես Ռու-  
սաստանի հզորացման առաջն առնե-  
լու համար:

Ռուսաստանը հյուսիսից դեպի  
հարավ իջնելով, Անգլիան Հնդկաս-  
տանից դեպի հյուսիս բարձրանալով,  
աշխարհի էս երկու հզորների շա-  
հերն ու ազդեցությունները վաղուց են  
իրար դիմադրում եկել Միջին ու Փոքր  
Ասիայում: Եվ Անգլիան ամեն կերպ  
աշխարհել է միշտ Ռուսաստանի դեմ  
սրբեղծել մի պարվար, պաշտպանել է  
մերթ Պարսկաստանին, մերթ Տաճ-  
կաստանին և առհասարակ Ռուսաս-  
տանին թշնամի ամեն մի ուժ, սրա  
ծավալման ու հզորացման առաջն  
առնելու համար:

Մյուս կողմից՝ գերման ու սլավոն  
ցեղերի հին անբախտությունը հա-  
րարվել է նոր իրական հանգամանք-  
ներով: Գերմանիան է ազդեցություն-  
ներ ու իրավունքներ չեղք թերի Տաճ-  
կաստանում և հայրենիքն ուսի ճա-  
նապարհին: Ավստրիան է փեսուն  
օրը ցերեկով, որ Ռուսաստանը իր  
ամեն մի զարկով ոչ թե շարունակ մե-  
ծանում է Տաճկաստանի հաշվին,  
այլև իրար երկից ազատագրում քո-  
լոր սլավոն ցեղերին, իսկ ինքը Ավստ-  
րիան ունի 25 միլիոն սլավոն հպա-  
րակ: Սրանց հետ միասին եթե առ-  
նենք և այլ ուրիշ հանգամանքներ,  
քաղաքական թե փոքրասկան, պարզ  
կլիմի մեզ համար թե ինչու Ավստրի-  
ան ու Գերմանիան էլ համախ պաշտ-  
պանել են Տաճկաստանին ռուսի դեմ,  
որ հունա-սլավոնականության մեծ  
ներկայացուցիչն ու վերածնողն է

հանդիսանում:

Դեռ 16-րդ դարից, Ղրիմի քաքար  
խաների դեմ մղած կռիվների օրից,  
իր հետ ունենալով սլավոն ցեղերը,  
վեր է կացել Ռուսաստանը Տաճկաս-  
տանի դեմ: Եվ քանի-քանի անգամ  
մահացու հարվածներ է տվել նրան:  
Բայց կանոնավոր կերպով ամեն մի  
հաղթանակից հետո նրա դեմ են  
դուրս եկել եվրոպական մեծ պետու-  
թյունները և կանգնեցրել են պարսե-  
րազմի դաշտում:

- Ո՛չ, Տաճկաստանը պետք է սա-  
րի և դու շպետք է գորանաս նրա հաշ-  
վին:

Թեև իրենք էս միջնորդություննե-  
րի համար միշտ գորացել են Տաճ-  
կաստանի հաշվին և ռուսին փարել  
են մի որևէ կոնգրես կամ կոնֆե-  
րանս:

- Անարոմիա կամ ավտոնոմիա,  
պահանջ է դրել Ռուսաստանը վեհա-  
ժողովներում:

- Ո՛չ, Տաճկաստանի ամբողջու-  
թյունը պիտի մնա անչեռնմխելի և  
ամեն մի բարենորոգում իր երկրի մեջ  
նորին մեծություն սուլթանի փառիշա-  
հության ներքին գործն է, և նա արդեն  
ազնիվ արքայական խոսք է տալիս, և  
ահա հրապարակվում է էս ինչ կամ էն  
ինչ թուղթը,- վճռել են ամեն անգամ  
եվրոպական մեծ պետություններն ու  
փակել իրենց վեհաժողովները:

Միս թե որտեղ է, ինչպես Տաճ-  
կաստանի հետ կապված ուրիշ հար-  
ցերի, էնպես էլ հայկական հարցի դժ-  
բախտության պարտադր, և ահա թե  
ինչու և ինչպես է սարել թուրքիան:

Հայկական հարցը վայրենի կոտոր-  
ածների հարց է, հայաժամերների ու  
զաղթականությունների հարց է. նա  
գերազանցորեն ֆիզիկական գոյու-  
թյան խնդիր է: Եվ նրա հաջողությու-  
նը միշտ կապված է եղել Ռուսաստա-  
նի հաջողության հետ: Ով վեր է կա-  
ցել Ռուսաստանի հաջողության դեմ,  
վեր է կացել հայկական հարցի հաջո-  
ղության դեմ, և ով Ռուսաստանի դեմ

ՊՆՏՈՒՄ Թ ՈՂՈՒՄԻՆ



պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղակից է քաճկական զազանություններին ու հայկական սարսափներին:

Նա պարասխանարու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պարսնության առաջ:

Եվ Կրեղ չկա խուսափելու:

«Հորիզոնի» նախանցյալ N 9-ում մեր խոսքը նրանով վերջացավ, քե եվրոպական պեպոնություններից որը եղել է Ռուսաստանի ծավալման դեմ, նա դեմ է եղել և հայկական հարցին, էնպես է հայկական հարցը իր ներկա բնավորությամբ, որպես գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր, կապված Ռուսաստանի առաջիադարության հետ:

Հասարակ կարելի է սանել՝ բոլոր հայերը գիրեն ու համոզված են, որ Գերմանիան ու Ավստրիան ավելի քան անկարբեր են եղած դեպի հայկական հարցը: Բայց մեր մեջ հավար կա արմատացած, քե Անգլիան ու Ֆրանսիան եղել են հայկական հարցի բարեկամները:

Ինչ քվում է մեզ էս քաղցր մոլորության մեջ գցել են Գլադստոնի, Դիլլոնի, Բերառի, Պրեսանտի նման լավ մարդկանց ճանաչող ի պաշտպանություն ժողովրդի, ընդդեմ Թուրքիայի վարքար կառավարության: Իսկ իրենց պեպությունները, որ միշտ եղել են Ռուսաստանի զորացման դեմ Արևելքում, դրա հետ միասին միշտ էլ դեմ են եղել հայկական հարցին:

Անցյալ դարու սկզբից Ռուսաստանը մրավ Կովկասի սահմաններն ու սկսեց իր պարսկական պարերազմները: Էդ պարերազմները քե Գուգարք ու Սյունիք, քե Շիրակ ու Արարատյան երկրում՝ ազգային սրբազան պարերազմի նշանակություն ունին հայերի համար: Վճռվում էր պարսկահայկական հարցը:

Հայ ժողովուրդն ազատվում է պարսկական դժոխքից: Հայոց

հոգեորականությունը խաչը չեռքին գնում էր ռուսաց զորքի առաջին: Հայոց ինքնապաշտպանության խմբերը որ կամավորներ էին կոչվում, կոչվում էին ռուսաց զորքի շարքերում կամ ապահովում էին նրա ճանապարհը թշնամու հարչակումներից: Հայ ժողովուրդը իր անբողոքությամբ ուրի էր կանգնել:

Եվ էդ բոլոր պարերազմներում Անգլիան օգնում էր Պարսկաստանին: Իհարկե, նա չէր էլ մրաժում հայ ժողովրդի մասին, և միայն մի ցավ ուներ՝ կրելի ռուսի առաջիադարության ճանապարհը դեպի հարավ, դեպի Հնդկաստանի իր կալվածքները: Եվ Էդպեսով գործում էր պարսկահայկական հարցի դեմ: Թե՛ 1804-7, քե՛ 1810-13, քե՛ 1826-28 քվականներին պարսից սարվազների գլուխն անցած ռուսաց զորքի դեմ, նրանց հետ և հայ կամավորների ու հայ ժողովրդի դեմ՝ կոչվում էին Անգլիայի օֆիցերներն ու ինժեներները, պարում էին անգլիական հրացանները, որ 2 հազարով ու 40 հազարով, իրենց ամեն ռազմամթերքով Կալիս էր Պարսկաստանին Հնդկաստանի անգլիական կոնյանիս: Ղարաբաղի անբողոքությունների ու Էջմիածնի պարիսպների դեմ որոտում էին և անգլիական բնդանոթները, որոնց վրա մակագրված էր. «Թագավորների Թագավորից Շահերի Շահին պարզ»:

Սակայն, վերջիվերջո, հաղթվեց Պարսկաստանը ու վճռվեց պարսկահայկական հարցը. այսինքն, պարսկահայկական նահանգներն անցան Ռուսաստանին և ապահովվեց հայ ժողովրդի գոյության խնդիրը:

Հերթն եկավ քաճկահայկական հարցին:

Տեսնում ենք դարչյալ Անգլիան Տաճկաստանի հետ Ռուսաստանի դեմ և միաժամանակ դեմ հայկական հարցին:

(վերջը՝ հաջորդ համարում)

ԳՐԻԳՈՐ ԶՕՅՐԱՊ

# Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ց Ը

ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

## Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ց Ի Ն Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ը

Հայերը որ կը բնակին Էրզրումի նահանգը, Վանի, Պիթլիսի, և Տիգրանակերտի նահանգին արեւելեան մասը, Արամայի նահանգը և Հալեպի նահանգին հիւսիսը (Կիլիկիա)՝ կը կազմեն քրիստոնեայ բնակչութիւն մը, ամէն կողմէ շրջապարտած իւրան բնակչութեամբ, բաղկացած, մեծ մասամբ, վաչկատուն ցեղախումբեր:

Ասիոյ հեռաւոր և խուլ այս անկիւններուն մէջ, Հայերը, երկու հազար տարիէ ի վեր, արեւմտեան քաղաքակրթութեան ներկայացուցիչներն են, նախ՝ որպէս քրիստոնեայ, ապա իրենց մշակոյթով: Վեց դարերէ ի վեր ինկած Օսմանեան տիրապետութեան տակ, իրենց պարսնութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ երկար մարտիրոսագրութիւն մը: Շարքերը, փրկելու համար իրենց կեանքն ու սրտացումքը, սրիպումս են իւրանմալ (Թոր-

թումի, Պայպուրթի շրջան, Թրզրումի նահանգին մէջ՝ 1820: Խոյի, Սիլվանի շրջան, Պիթլիսի նահանգին մէջ՝ 1800: Համշէնի, Զարայերէի շրջան, Տրապիզոնի նահանգին մէջ՝ 1830): հայերու մեծ զանգուած մը զառքեց դէպի Ռուսիա (1830ին, 56ին, 78ին), դէպի Մարսէլ (1874էն մինչև 1905), դէպի Միացեալ Նահանգներ (1878էն մինչև 1912, այսինքն նոյնիսկ Օսմանեան Սահմանադրութեան հոշակումէն ետք): Բայց հայկական մեծ զանգուածը կապումս կը մնայ իր հայրենի հողին:

Վերջին դարու կէսերուն սկիզբն էր որ եւրոպական դիւանագիտութիւնը առաջին անգամ զբաղեցաւ Հայերով, Չէթունի ապստամբութեան առիթով (1867ի ֆրանսական միջամտութիւնը):

1867էն մինչև Ռուս-Թրքական պարերազմը, այսինքն տասը տարուան շրջանի մը ընթացքին, այլեւս հայերուն շուրջ չայն շտտեցաւ: Եւրոպական թէև որոշ շահագրգռութիւն ցոյց կու տար բնդանրապէս Թուրքիոյ

ԳՐԻԳՈՐ ԶՕՅՐԱՊ



քրիստոնեականներուն մասին, բայց մոռացութեան կու տար արեւելեան նահանգներուն մէջ բնակողները: Միայն Անգլիան էր որ իրագիւ կը մնար Անապօլոսի Հայերու նակարագրին, պարզապէս այնպէս հակակշռելու համար ռուսական ազդեցութիւնը:

Ռուս-Թրքական պայտերազմի ընթացքին, իր քանակներուն ջախջախուելէն ետք, Թուրքիան ամէն կողմէ լքուած, պահ մը վախճուաւ որ յաղթականին պահանջները հասնին մինչեւ Ասիական Տիարապէտի եւ Սվազ նահանգները իրմէ խլելու, եւ մղեց Հայերը, որպէսզի հայ բնակչութեամբ նահանգներուն համար քաղաքական ինքնավարութիւն մը պահանջեն Օսմանեան գերիշխանութեան տակ: Ասիկա, Թուրքիոյ աչքին միակ միջոցն էր վերջնականապէս կասեցնելու ռուսական արշաւանքը դէպի Թուրքիոյ խորները, այնպէս սրեղծելով տեսակ մը պայտերազմութիւն (1877 Նոյեմբեր): Անգլիական նաւապորտին Պոլիս հասնիլը փարսպեց Թուրքիոյ վախերը եւ թոյլ տուաւ հրաժարելու որոշումէ մը՝ որ ներշնչուած էր արդէն միայն յուսահատական կացութենէ մը: Խաղաղութեան քանակցութեան ընթացքին, որ տեղի ունեցան Սան-Սթեֆանոյի մէջ, Թուրքիա մերժեց Հայերու խնդրանքով ռուս լիազօրներուն կողմէ խմբագրուած պահանջագիրը: Սան-Սթեֆանոյի 16րդ յօդուածին վերջնական չեղի մէջ «վարչական ինքնավարութիւն» բանաչելը փոխարինուեցաւ «քաղնորոգում եւ քարնալում» բռնարով, եւ որպէս երաշխիք՝ ռուսական զբառումով:

Պերլինի Վեհաժողովին մէջ, շնորհիւ Մեծն Բրիտանիոյ օժանդակութեան,

Թուրքիա յաջողեցաւ ջնջել տալ նաեւ ռուսական զբառումի պայմանը: Այս վեհաժողովին, Հայերը պահանջած էին իրենց Պարթիարքին քերտով, վարչական ինքնավարութիւն մը եւ այս անգամ բացէ ի բաց ընդդէմ թուրք կառավարութեան:

Այդ պահանջը նկատի յառնուեցաւ, եւ այդպէս էր որ ծնունդ առաւ Պերլինի Դաշնագրին 61րդ յօդուածը: Հայերու վիճակին քարնալուման բոլոր յոյսերը կորսուեցան ու դարչեալ լոռութիւն իջաւ անոնց վրայ:

Կացութիւնը հայկական նահանգներուն մէջ դարչաւ անշնչելի: Վեց պետութիւնները, հաւաքական յուշագրով պահանջեցին խոստացուած քաղնորոգումներու գործադրութիւնը: Յուշագիրը կը ճշդէր թէ ինչ բնոյթ պէտք է կրեն քաղնորոգումները: Թուրք կառավարութիւնը անպատասխան թողոյց:

Անցան քանի մը տարիներ: Շնորհիւ Երուսալի անկախութեան, Հայերու հալածանքը առաջ տարուեցաւ այնպիսի մեթոտով եւ հետեւողական ռազմով մը, որ սակայն հազուադէպ է Թուրքիոյ մէջ: Հայաստանի մէջ, ամենուրեք, Հայերը կը զրկուէին իրենց հողերէն: Յուսահատութեան մարտում, ըմբոստացան քաղնաքի անգամներ (Սասունի առաջին դէպքերը 1894ին): Բարչրազոյն Դուռը պատասխանեց արիւնալի ճնշումով եւ ջարդով:

Եղաւ որ երոստական քրիստոնեայ խիղճի պահ մը հարց տայ ինք իրեն, թէ պատասխանատուութեան բաժին մը չունի՞ արդեօք քաղնում արեւան մէջ: Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Ռուսիա պահանջեցին գործադրութիւնը քաղնորոգումներուն որ Թուր-

ԼՈՒՍԵՕՑ ԵՍԵՎԻՍ

ԳՅՈՒՆ ԳՈՒԿԱԿՆԵՐ

քիա յանչն առած էր կիրարկել հայկական նահանգներուն մէջ, ըստ Պերլինի Դաշնագրի 61րդ յօդուածին: Այս երեք պետութիւնները յուշագրով մը ներկայացուցին նոյնիսկ քաղնորոգումներու ծրագիր մը: Թուրքիա մերժեց եւ անոնց հակադրեց իր կողմէ պատրաստուած ծրագիր մը եւ այդ նպատակով առաքելութիւն մը դրկեց Հայաստան, Շարիր փաշայի հրամանին տակ: Մինչ այդ, Հայերը ցոյց մը կ'ընէին Բարչրազոյն Դրան առջեւ: Թուրք ուտիկանութիւնը, նախօրօք տեղեակ, զինած էր իսլամ բնակչութիւնը: Ուտիկանութիւնը այդպէս ազդանշանը կու տար Պոլսոյ Հայերուն առաջին ջարդին, որուն շուրջով պիտի հետեւէին հայկական մեծ ջարդերը եւ արիւնով ողողէին ասիական նահանգները (1895-1896):

Այդ ջարդերը զերազանցեցին այն ամէնը որ պայտերազմը արշանագրած է սարսափով: Աեղի քան 100000 Հայեր կորուորուեցան: Միայն մըն է կարծել թէ այդ ջարդերը Ապրիլ Համարի անչնական գործն էին: Կառավարական արարք մըն էր ուր Օսմանեան քաղաքական բոլոր մարդիկը իրենց քաժիւնը ունեցան: Միայն թէ Բարչրազոյն Դուռը ինչպէս գործադրեց Պետութիւններուն խոստացած քաղնորոգումները եւ թէ ինչ էր այն առաքելութիւնը որ քացած էր զլուսի հանելու Շարիր փաշան: Այս սարսափի արարներուն ի տես, երոստական դիւանագիտութիւնը ոչինչ ըրաւ, կամ գրեթէ ոչինչ: Այսուհանդերձ քանի մը վեհանչն շայներ քարչացան ի նպատակ Հայերուն Ֆրանսայի, Անգլիոյ, Չիլիի, Եւրոպայի մէջ, եւ որոշ համակրանքի ցոյցեր՝ Ռուսիայէ:

Իրականին մէջ, Հայերը դադար-

պարտուած էին միայն ու միայն իրենք իրենց վրայ հաշուելու: Արդէն, 1895-ին, Չէյթուն պայտերազմ էր եւ յաջողած, յաղթական դիւանորութեամբ մը, ետ կեցնել ջարդելու եկող քանակները: 1896-ին, յուսահատութիւնը մղեց խումբ մը յեղափոխականներ կազմակերպելու Պանք Օթոմանի ցնցիչ դէպքը, որուն հետեւեցաւ Կոստանդնուպոլսոյ հայերուն մեծ ջարդը: Նոր ընդվզումներ տեղի ունեցան անյի ետքը Սասունի եւ Վանի մէջ: Հայ ազգը իր հոգեվարքը կ'սպրտէր, երբ, Սահմանադրութեան հոշակումին հետեւանքով վերջապէս կարծեց շունչ մը առնել (1908):

Հայերը երբեք քաղաքական նպատակներ չեն սնուցած: Կեանքի սպառնալուքներ, պատուի, ինչքի սպառնալուքներ, աշխատելու եւ իրենց աշխատանքին պարտուող վայելելու կարելիութիւն, իրենց ազգային մշակոյթը պահելու իրաւունք, - այս ամէնը կազմած են եւ այսօր ալ կը կազմեն իրենց միակ փառասիրութիւնը: Երկրասարդ Թուրքերը (Միութիւն եւ յառաջդիմութիւն Կոմիտէ) որոնք կ'ուզէին ազատել իրենց երկիրը Ապրիլ Համարի չեղքէն, չէին կրնար շարժել այսքան փարսական իրաւունքներ, այսքան համեալ քաղնաքներ: Այդ մասին հանդիսատար յանչնաւորութիւն սրանչնած էին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կոմիտէին առջեւ (Փարիզի համաշայնութիւն, 1907 Դեկտեմբեր): Ի ջզոյէ լաւագոյն երաշխիքի մը, Սահմանադրութեան հաստատումը եւ անոր պարկեշտ գործադրութիւնը խարխիւ համարուած էր իրենց համաշայնութեան:

Յայտնի է թէ այդ Սահմանադրու-

ԼՈՒՍԵՕՑ ԵՍԵՎԻՍ

թիւնը ինչպէս ջրեց իր վրայ դրուած յոյսերը: Հոս տեղը չէ պատճառները փնտրելու: Արանայի ահաւոր ջարդերը, քալանի, բռնաբարումի եւ ամէն տեսակ պղծութիւններու սովորական դարչած շարանով՝ ցոյց տուին թէ կրօնական մոլեռանդութիւնը ոչինչ կրանցուցած էր իր ուժէն սահմանադրական վարչակարգի տակ: Անկի քան 20000 Հայեր, ամէն տարիքի, մանուկ, ծեր, կին՝ սպանուեցան Արանայի մէջ եւ շրջակայքը: Բոլոր անոնք որ կարծած էին թէ կրնան ապրիլ Թուրքիոյ մէջ արդարութեան եւ հաստատութեան վարչակարգի մը տակ, շուտով բօրափեցին իրենց յոյսերը: Բուն իսկ Հայաստանի մէջ, գաւազնածային բնաջնջումներ չկատարուեցան, բայց ոճրագործութիւնները, կողոպուտները զարգացան՝ շնորհիւ հեղինակներուն անպատիժ մնալուն, եւ որպէս քաղաքական սխալեմ նուիրագործուեցան: հայերը դարչեալ սկ-

սան գաղթել (1910-1912): Երիտասարդ Թուրքերու Կառավարութիւնը յուզուեցաւ այդչէ: Իր փափարքներուն իրականացումը կը տեսներ:

Բայց Օսմանեան պետական մարդոց համար այնքան քաղցալի պարսպը դեռ չէ գոյացած: Ի հենուկս ջարդին, քալանին եւ Հայերը իրենց հողերէն զրկելու քազմաթի յեռնարկներուն, անոնք այսօր ալ դեռ կը կազմեն, ճիշդ այն պահուն երբ Արեւելքի խնդիրը դարչեալ կը բացուի իր ամբողջ լայնութեամբ եւ ուր Հայկական Հարցը կը դրուի քաղաքակիրթ աշխարհի խղճին առջեւ՝ ամենէն կարեւոր ազգաբնակչութիւնը այդ գաւառներուն մէջ իրենց թիւով, տնտեսական ուժով, իրենց իմացական մշակոյթով եւ աշխատունակութեամբ: Անոնք կը մնան քաղաքակրթութեան միակ տարրը այդ շրջաններուն մէջ ուր անորակելի վարչութիւն մը անբաժնութիւն կը սփռէ:

ԵՄԵՐՈՑ ԵՍԵՐԿԵ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՈՍՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԵՎՐՈՒՄ

Դաշնակիցների վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ զինադադարից հետո: Հայկական հարցի կիսալուծումը: Հայաստանի առաջարկվող սահմանների քննարկումը: Հայաստանի իրական սահմանները: Նրանց հաստատման հիմքը որպես նախադրյալ հայաստանի գոյության: փոփոխություններ մանրամասներում: Տարածքը և բնակչությունը: Իրավարարության նշանակությունը:

ԵՄԵՐՈՑ ԵՍԵՐԿԵ

Թուրքիայի նակատագիրը վերջած է:

Քաղաքակիրթ աշխարհը, որ սպասել էր դարեր շարունակ, Սերի պայմանագրի ստորագրման մասին լուրը ընդունեց թեթեւացած շունչ քաշելով:

Թուրքիայի հիվանդ կազմվածքի համար այլ դեղամիջոց չգտնվեց, նրա առողջ մասերը կտրտելուց զատ: Թուրքիան անդամահատված է՝ բոլոր ազգային տարածքները անջատված են և այժմ անկախ միավորներ են կազմում: Միայն թուրքական Անատոլիան է մնում նրա տիրապետության ներքո, և նույնիսկ որպես այդպիսին էլ քաժանկամ է օտարերկրյա գուրիների, այնպիսի տնտեսական, ֆինանսական և քաղաքական պայմաններով է շղթայված, որ այսուհետև Թուրքիան, թուրքերի իսկ խոսքերով, «թողնվել է առանց աչքե-

րի, սկանջների, չեռքերի կամ ոտքերի»:

Օսմանյան կայսրությունը, անկասկած, կործանված է: Նա սրացավ պատիժ, որին լիովին արժանի էր: Վերջապես Եվրոպան քաջություն ունեցավ եթե ոչ ամբողջապես խորտակելու, գեթ դուրս քաշելու թունավոր սողունի արամները, որին նա դարեր շարունակ սնուցել էր իր իսկ սեփական քաղաքակրթության կրծքին:

Այս անգամ դաշնակից տերությունները որոշակիորեն չեն կարող կասկածել Թուրքիայի հանդեպ սովորական կողմնապահության մեջ: Նա մերժված էր իր սև աներախտագիտության համար, իր դավաճանության և հանցանքների համար՝ իր վաղեմի հովանավորների նկատմամբ:

Կհամարչակվե՞նք արդյոք մենք

քննարկելու այն հարցը, թե ինչպես  
դաշնակից փերությունների անողոր  
ու դաժան վերաբերմունքը ազդեց  
հայկական հարցի վրա, որը մեր  
մասնավոր հեղափոխության առար-  
կան է: Չի կարելի ժխտել, որ այն  
ամենը, ինչ ծառայել է որպես բարո-  
յական հիմք Թուրքիայի նման դա-  
ժան վերաբերմունքի համար, վերց-  
ված է, բարոյ լայն իմաստով, հայկա-  
կան կյանքի վշտալի փարեզրությու-  
նից: Այդ դեպքում ինչպե՞ս վերաբեր-  
վեցին դաշնակիցները իրենց կրկուր  
եղբոր՝ հայերի նկատմամբ: Վճռա-  
կանություն ցուցաբերեցի՞ն պարծե-  
լու թուրքերին նրանց անլուր հան-  
ցանքների համար, որ գործեցին հա-  
յերի նկատմամբ, անգամ պարեհազ-  
մի ընթացքում:

Հարցը թախծալի հուշեր է արթ-  
նացնում: Երկու փարի է անցել այն  
պահից, երբ գոռոզամիտ թշնամին  
վայր դրեց զենքերը և դաշնակիցնե-  
րից զինադադար աղերսեց:

Այս ամբողջ ժամանակի ընթաց-  
քում փերությունները ոչինչ չարեցին  
ոչ մի միջոց չեղք չառնվեց հրով ու  
սրով ցանուցիր արված հայերին  
նպաստել՝ վերադառնալու իրենց  
փերի դեռու ծխացող մոխրակույ-  
րերը: Ավերված և պարեհազմի  
սարսափներից ամայացած Հայաս-  
տանը դեռ ներկայացնում է սուկա-  
կան մի անապատ, որտեղ աշխա-  
տավորը չի կարող ապրել, և որը  
ավազակախմբերն են փնտրում:

Հայկական ազգաբնակչությունը,  
որը խոյս փվեց թուրքական բնաջն-  
ջումից Անդրկովկասի իր ազգակից-  
ների մոտ, նույնիսկ այնպե՞ղ էլ ան-  
դորր չգտավ: Ռուսաստանում փերի  
ունեցած հեղափոխության պարճա-  
րով հայերը, թողնված իրենց նակա-  
րագրին, պեղք է, նախ, դիմագրավե-  
ին թուրքական ներխուժումը, իսկ հե-  
տո էլ փերախոչակ Ադրբեջանի հան-

րապետության բաթարների հարչա-  
կումները, իրագործված ոչ առանց  
դաշնակիցների օգնության:

Արդեն հինգերորդ փարին է, ինչ  
թուրքական նահանգներում արմա-  
տախիլ արված հայ ազգաբնակչու-  
թյունը քափառում է օդար երկնքնե-  
րի փակ: Դրա նակարագրական  
հեղափոխությունը անչափելի են: Ժո-  
ղովրդի հայրենիքը մի սուկական աշ-  
խարհագրական հասկացություն չէ:

Որոշակի փերավայրի պայմաննե-  
րում և ազգային գծերի համամիա-  
նության մեջ կազմավորվում են ժո-  
ղովրդական ավանդույթները, հերթ-  
աբները, փարագը, բարքերը, լեզվա-  
կան առանցնահարկությունները, մի  
խոսքով, ներքին գիտակցականու-  
թյան թուր արտահայտությունները:

Օդար երկրում այս ամենը մոռաց-  
վում է, արմատախիլ է լինում և կոր-  
ծանվում: Երկրի հեղ կապված պար-  
նական հիշողությունները թորշուժում  
են: Կարճ ասած, այն ամենը, ինչը  
կազմում է մի երկրի և մի ժողովրդի  
հոգեկան կերպարը, ինչը նրանց մշա-  
կութային որակ է դարձնում, վրանգի  
է ենթարկվում օդար շրջապատում:

Ոչ ոք նրանց օգնության չեղք  
չմեկնեց, որ թելադրված լինեք այդ  
սարսափի գիտակցությամբ: Ոչ ոք  
հոգ չտարավ, որպեսզի նրանք վերա-  
դառնան իրենց երկիրը, իսկ հեղ  
արդեն չափազանց ուշ էր:

Մինչդեռ, մի միակ գորեղ խոսք,  
մի միակ ազդեցիկ պահանջ, որ ար-  
տախիլեր զինադադար կնքելիս,  
քավական կլինեք արտաքսելու Հա-  
յաստանից այդ ավազակային հրո-  
սակախմբերին և վերադարձի նամ-  
փա բանալու փախստականներին  
իրենց բուն բնակավայրերը:

Դաշնակից գործերը դեռու գոր-  
ծում են Միջագետքում և Միջիստում:  
Կիլիկիայում ֆրանսիական զենեղա-  
ները ներգրավվում են անվայելույ  
մրցակցության մեջ թուրք ազգայնա-  
կանների հեղ, հայ ազգաբնակչու-

թյան քիկունքում: Չնայած դրան, մշ-  
տախիս ասվում է, որ դաշնակիցներն  
իրենց փրամադրության փակ միջոց-  
ներ չունեն՝ մարքելու Հայաստանը  
արկածախնդիրների կողոպտչական  
հրոսակախմբերից:

Բարեբախտաբար, հայ ժողովրդի  
համերությունը սահման չունի: Այն  
հեզորեն կրել է զինադադարի այս եր-  
կու փարիների թուր դժբախտու-  
թյուններն ու փորձությունները, իր  
հույսը դնելով հաշտության կնքման  
պահի վրա, երբ, վերջապես, ենթադ-  
րաբար, կարանա իրեն հասանելիքը:

Երկար սպասված հաշտությունը  
կնքվեց Սեբում: Համաշայն 88-րդ  
հողվածի Հայաստանը նանաչվեց որ-  
պես ազատ և անկախ պետություն:  
Այս հայտարարությունը, հուշակելով  
հայկական հույսերի հաղթանակը,  
ինքնուրախության քավարար կլինեք  
խաղաղեցնելու ժողովրդի միտքը,  
եթե այն ազուցված լինեք առավել  
իրական և հոգաբար պայմաններով,  
որը նրա անհապաղ կենսագործումը  
հնարավոր դարձնեք ամբողջությամբ  
վերցրած: Սուկ այն փաստը, որ Հա-  
յաստանի սահմանների կարեղու-  
գույն հարցը գործնականում բաց է  
մնում, նշանակալիորեն նվազեցնում  
է այս սկզբի գործած փայլունությունը,  
այլապես, անկասկած, խիստ մեծ  
նշանակություն ունի:

Ռուսական սահմանը պեղք է  
որոշվի Հայաստանի և նրա հարեան-  
ների՝ Էրաստանի և Ադրբեջանի փո-  
խադարձ համաշայնությամբ, որոնք  
երկուսն էլ իրավական առումով  
դեռու նանաչված չեն: Ասխատե-  
ված է սակայն և շար միջոց, որ այս  
դեպքում, երբ համաշայնություն չի  
կայանա, վեճը կլուծեն գլխավոր դաշ-  
նակից փերությունները: Սահմանը  
Հայաստանի և Թուրքիայի միջև  
նույնպես մնում է չորոշված այսպեղ  
խնդիրը դրված է Միացյալ Նահանգ-  
ների պրեզիդենտի վրա, սահմանա-  
փակելով նրա լիազորությունները

չորս վիլայեթների փարածքով:  
Անշուշտ, գերադասելի կլինեք այլ  
չեկերպում, որը հարակորեն մար-  
նանչեք, որ ամենից առաջ Թուրքիան  
պեղք է նանաչի խնդրո առարկա  
հայկական վիլայեթների զիջումը:  
Եթե այդպես արվեք, օսմանյան կա-  
ռավարությունը չենուպահ կմնար այն  
անհարկի դիտողությունից, որ նրա  
ներկայացուցիչները թույլ փվեցին  
անելու Սեբի պայմանագրի դեմ թողո-  
քում, այն է՝ ... ոչ մի կարիք չկար ընդ-  
լայնելու Հայաստանը նախկին ռուս-  
թուրքական սահմանագծից այն  
կողմ: Նա չէր կարողանա միանրո-  
րեն հավակնել հավատարու, որ պա-  
հանջվում է նրա կողմից, Հայաստա-  
նի Հանրապետության նանաչումը,  
որը ծնունդ էր առել ռուսական հեղա-  
փոխության թոխորոխում, նանաչում,  
որն արժանի է ուշադրության: Եթե  
90-րդ հողվածն ընդունում է չորս վի-  
լայեթների ամբողջապես Հայաստա-  
նի փոխանցելու հնարավորությունը,  
այդ առումով ավելի դրական հայտա-  
րարություն ցանկալի կլինեք, պրեզի-  
դենտին թողնելով փոփոխումներ կա-  
պարելու ընտրությունը:

Այս ամենը, սակայն, մեծ կարեղ-  
ություն չունի: Իրականում բանն այն  
է, որ հայկական հարցի լուծումը,  
փաստորեն, հեղաշարժված է: Սակայն  
հայկական հարցի պարմությունը  
ցույց է տալիս, որ ամեն մի անորոշու-  
թյուն, ամեն մի հեղաշարժում հող է  
սարսափելի հեղափոխություն հայ ժո-  
ղովրդի նակարագրի համար: Սեբի  
դիվանագիտությունը մեծ վճռակա-  
նություն ցուցադրեց ուրիշ և ավելի  
մեծ թուրքական նահանգներ հանչ-  
նելիս: Նա խիզախորեն թոթափեց  
թուրքական լուծը Միջագետքից, Մի-  
ջիստից, Արարիայից և Հունական  
Անապոլիայից, ու գտավ և՛ կամք, և՛  
ժամանակ՝ որոշելու համար նրանց  
սահմանները:

Վճռականությունը, սակայն, լքեց  
դաշնակիցներին, երբ նրանք դեմ

հանդիման ելան փոքր Հայաստանի հարցին: Երկրներ և ժողովուրդներ, որոնք շար ավելի քիչ էին փառապել թուրքական լծից, արդեն լիովին ազատագրված են, մինչդեռ Հայաստանը, որը ասես եռացող կաթսա լինելով թուրքական հնոցում, կրկին դա փառապարված է սպասելու:

Հայերի հուսահատական կանչերը արջագանգրում են աշխարհով մեկ: Միջազգային հարթավայրերը հեղված են նրանց արյունով. նրանց մարմինները սփռված են Միջագետքի ավազույր անապատներում: Մինչդեռ հենց Միջագետքն ու Միջագետքն են կյանքի կոչված մեծ քաղաքակրթության տեր տերությունների հովանու ներքո, մինչ Հայաստանը թողնված է իր անորոշ մակարագրին:

Ի՞նչը դրդեց Սերի բարչրագույն դատարանին անխրախուսաբար նսյել Հայաստանի չափերի հարցին: Ի՞նչ կանխեց նրան ավելացնել Հայաստանին այս երեք կամ չորս վիլայեթները, ի՞նչը դրդեց նրան գործը վերապահել պրեզիդենտ Ուիլսոնին:

Եթե սա վիճելի հարց է, ապա լուծման բանալին պետք է գտնել նրա բուն պարունության մեջ: Դաշնակիցները նույնքան քաջատեղյակ են հայկական հարցին, որքան պրեզիդենտ Ուիլսոնը: Կես դար շարունակ միջազգային դիվանագիտությունը առկտուր է արել նրա շուրջ: Մեկ անգամ չէ, որ հայկական վիլայեթների անունները հիշատակվել են զանազան միջազգային ակտերում, սկսած 1878 թվականից: Անգամ պարսկերազմի նախորդին, երբ բարեփոխումներ պետք է կատարվեին, այս վիլայեթները բաժանվեցին սեկցիաների: Անեն որ կհիշի այս:

Թվում է, որ իրական Հայաստանը պետք է փնտրվեր այն նույն վիլայեթների սահմաններում և, այդ դեպքում գործը եթե անհրաժեշտ էր, կվերապահվեր պրեզիդենտի միջնաբարությունը:

Ոչ մի արտաքին ուժ չէր կարող կանխել դաշնակիցներին ցուցադրելու իրենց բարյացակամությունը: Թուրքիան ընկած է դիտարկության, ինչպես նաև Գերմանիան ու Ավստրիան: Ռուսաստանը այժմ համար, հենացված է կոնֆերանսի սեղանից: Բոլոր թշնամական ազդեցությունները, համեմայն դեպս այդպես համարվողները, ջլափված են: Բոլոր հնարավորությունները կային ցանկացած պայմանները քննադրելու Թուրքիային: Չնայած դրան, դաշնակիցները միայն կիսով չափ բավարարեցին հայերին, մինչդեռ մյուս երեքը անջատվեցին նրա փառածքից: Անջատված վիլայեթների մի մասը մնում է Թուրքիային կցված, իսկ մնացյալը, Եփրատից արևելք, վերապահված է Թուրքիայանին:

Այս վերջին քայլը արդեն բացահայտ թշնամական ակտ էր, ուղղված Հայաստանի կենսական շահերի դեմ: Անշուշտ, հայերը դաշնակիցներից նվազ շահագրգռված չեն անկախ Թուրքիայան ստեղծելու գործում: Այս միջոցով խավարամիտ քուրդ ցեղապետները կոտորածներ թուրքական մասեր քաղաքագետների չեղքին ստոր գործիք լինելուց: Բանն այն է, սակայն, որ Թուրքիայան ստեղծվում է ոչ այնպես, որպես պետք է ստեղծվեր: Օգտար փառածքում նման արհեստական կազմավորումի զաղափարը ավելի շար կազեր ծեր մոլլա Իդրիսին կամ թուրքական կառավարողներից նրան ընդօրինակողներին, որոնք երազում էին հայկական շրջանների «քրդացման» մասին: Բայց եվրոպական դիվանագետների կողմից հայկական կոտորածների ոգեշնչողների հիմնական քաղաքականությունը վերցնելը և վավերացնելը անսպասելի և ապշեցուցիչ հարված էր:

Այս ակտի հիմքում ընկած քաղաքականությունը բացահայտորեն փարբեր է, և կարելի է ըմբռնել, եթե մտաբերենք 1916 թ. Ֆրանսիայի և

ՆՐԻՍՏՆԱՆՆԵՐԻ

Ռուսաստանի միջև կնքված զաղափան համառայությունը, որը վերաբերում էր Հայաստանի մասնատմանը միշտ և միշտ Խարբերողի գծի երկայնքով:

Դերսիմի և Խարբերողի սանջակները, որոնք այժմ վերապահվում են Թուրքիայանին, իրականում կազմում են և՛ աշխարհագրական, և՛ էթնիկական առումով Հայկական բարչրավանդակի անբաժան մասը: պարբերազմից առաջ այս շրջանում կային 100000 հայեր (85000 ըստ Լիմայի և 70 հազար ըստ Քիմեի) և նույն կամ ավելի մեծ թվով մի ազգություն, որը սխալմամբ քրդական էր համարվում: Թուրքերը նրանց «Ղզրաշներ» են անվանում, հայերը՝ «դուզկներ»: Այս վերջին անվանումը ավելի համար նրանք փախի են Դերսիմի բնակիչներին: Արևելքում, մահմեդական փրկապետության ներքո, լեզուն համարյա դադարել է ազգության չափանիշ լինելուց, կարևորության տեղը զիջելով կրոնին, որպես զլխավոր գործոնի: Ե՛վ ղզրաշները, և՛ Դերսիմի բնակիչները հեղեղում էին մի կրոնի, որը փարբեր էր քրիստոնեությունից ու իսլամից: Նրանց հավատալիքները հիմնված էին քրիստոնեական և մանիքեական ուսմունքների մի խառնուրդի վրա՝ արտաքուստ սրողված շիիզմով:

Պարունական լեզվով ասած, նրանք աղանդավորներ էին, հայկական պավլիկյանության հեղեղողներին: Շնորհիվ նրանց շիիտական գծերի, սունիները նրանց «ղզրաշներ» էին անվանում, դրանով իսկ նույնացնելով նրանց պարսիկների հետ: Հայկական «դուզկ» անվանումը, սակայն, նշանակում է «աղանդավոր»: Մա հավանաբար բացատրում է Դերսիմ անվան ծագումը՝ «աղանդավորների երկիր» (դուզ՝ հին Դուրզից, այսպեղից էլ Դուրզանսա և նրա արարական չեղ՝ Դուրսիմ):

Պավլիկյան աղանդավորները գրավում էին միշտ այն տեղիտորի-

նորդական բաժնի զեկուցագրերում հիշատակվում է «Մոլոտ» (Մորձ) կեղծանվամբ: Բանաստեղծը 1908 թ. վերջերին Թիֆլիսում, ի թիվս 160 հայ մտավորականների՝ «Դաշնակցության գործով» շերտակալվում է և մեկուսացվում Մեյքեի ամրոցում: Վեց ամիս անց Բասիակյանը խոշոր գրավի դիմաց ազատ է արչակվում քանկից, սակայն քննչական աշխատանքը Բասիակյանի դեմ շարունակվում է՝ սպառնալով նրան դատական պրոցեսի ավարտից հետո Միքիլյան արտը՝ առնվազն փաստը տարի ժամկետով: Ստեղծված իրավիճակում՝ արտրից խուսափելու համար, Բասիակյանը ստիպված հեռանում է հայրենիքից:

Տարագրության առաջին տարին Բասիակյանը անց է կացնում Թուրքիայում: Այստեղ առաջին անգամ հրատարակվում է «Արու Լալա Մահարի» պոեմը: Բնավ հույսեր չկապելով հայկական ինքնավարության վերաբերյալ երիտթուրքերի խոստումներին, «բարեփոխություններին», Բասիակյանը 1912 թ. հեռանում է Թուրքիայից՝ տազնապը սրտում:

Ենթադրելով, որ ստեղծված իրավիճակում պանիսլամիստական վտանգը կարող է սաստել միայն Թուրքիայի մեծ դաշնակիցը՝ կայզերական Գերմանիան, Բասիակյանը, ի թիվս մի քանի ընկերների և հայ մշակույթի պատմության նվիրյալ մի շարք գերմանացի մտավորականների հետ, 1914 թ. չեռնամուխ է լինում ստեղծելու «Հայագերման ընկերությունը»: Սակայն վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմը փակնուվրա արեց բանաստեղծի ծրագրերն ու սպասումները: Այս աշ-

խարհամարտը առանցնապես կործանարար եղավ Արևմտյան Հայաստանի համար: Գերմանիան հրահրում էր Թուրքիայի հայաջինց ծրագրերը՝ համարելով հայերին Ռուսաստանի բնական դաշնակից և գերմանաթուրքական ռազմական առաջընթացը խոչընդոտող ուժ:

Այս շրջանում Բասիակյանի ստեղծագործության հիմնական բովանդակությունն է դառնում հայ ժողովրդի ողբերգական նակարագիրը և նրա հերոսական ազատամարտի արտացոլումը: Նա չեռնամուխ է լինում ստեղծելու Հայոց ցեղասպանության մեղադրական «Մպիտակ գիրքը», որը պիտի հանդիսանար մեր ժողովրդի սպրած վշտերի ու տառապանքների ժամանակակից «Մատյան ողբերգության»-ը: Այդ գիրքը, համաչայն բանաստեղծի մտադրաման, պետք է Եղեռնի դաժան իրականության, դեպքերի ու ականապեսների պատմածի հիման վրա վերաբեղծեր հայ հերոսապատմի էջերը, բերեր դրվագներ հայ ֆիդայիների պայքարից, նրանց սիրանքներից: «Մպիտակ գրքի» մի զգալի մասն արտացոլվեց Բասիակյանի մտորումների, սպրումների և ստեղծագործական մտադրացումների մի յուրօրինակ խոստովանագրքում՝ «Հիշատակարանում», և նրա բազմաթիվ ծոցապետերում: Դրանց թվում առանցնանում է Բասիակյանի «Հայկական հարց» վերնագիրը կրող ծոցապետը: «Հայկական հարց» օրագրությունը գրվել է Ժնևում 1916-1917 թթ.: Ժամանակի ահագնակից իրականության ներքո Բասիակյանի քնարը մի շարք տարիներ պարզապես լռել էր: Մեծ հայրենասերը իր վիշտը, ցասու-

մը հայրնում է նամակներում, օրագրերում, հողվածներում: 1915 թվի ջարդերից հետո, ինչպես վկայում են Իսահակյանի բոլոր գրությունները, նա անդարձելիորեն երես է շուտ փվել Եվրոպայի պետություններից: Նա նաև որևէ էական նշանակություն չի փվել նաև Սևրի դաշնագրի ստորագրման փաստին և դեռևս 19-րդ դարավերջից Հայաստանի ապագայի վերաբերյալ հույսերը կապել է Ռուսաստանի հետ: Եվ սակայն Առաջին համաշխարհայինի փարիսերին Ռուսաստանի վարած քաղաքականությունը խորապես վշտացնում է Իսահակյանին: Նիկոլայ Երկրորդի կարգադրությամբ ռուսական զորքերը երկրի կանչվեցին ռազմական կարգի պահպանման գծից, բողոքելով հայ բնակչությանը բուրքական արյունալի հաշվեհարդարին, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանը խոչընդոտում էր Հայաստանում կամավորական խմբերի սրելու և արգելափակում հայ ջոկատ-

ների սահմանն անցնելը: Կայսերական Ռուսաստանը դեմ էր հայ ազգային ազատագրական շարժմանը, իսկ նրան հաջորդած բոլշևիկյան Ռուսաստանը դարձավ երդվյալ թշնամին հայ ազատամարտի, հայ անկախության: Լենինը պարմության մեջ հայրենի է որպես երկրորդի իրավահաջորդի՝ Մուսթաֆա Քեմալի հովանավորն ու փրկիչը, որի հանցագործ օգնությամբ՝ կործանված Թուրքիան նորից ուրբի կանգնեց: Եվ այս այսանը մահացու հարված հասցրեց Հայկական հարցին՝ նվիրաբերելով բուրքին Արևմտահայաստանի ողջ փարածքը: Հայերս մուսուլմանական օվկիանոսի մեջ ընկած մեր քրիստոնեական կղզու միակ ապավենը միշտ համարել ենք Ռուսաստանը, սակայն 1918-21 թթ. նա էլ «հայակործան ծրագրի» անարարապետներից մեկը եղավ:

(ազատեք հաջորդ համարին)

# Լ Ր Ա Տ Ո Ւ

## ԱՇԽԱՐՀՆ ԱՅՍՕՐ

ԿԱՅԱՆ ԹՈՒԹԻԿՅԱՆ

### ԱՐԵՒՄՏԱԿԱՅԵՐԷՆԸ

### ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Հազար անգամ ըստած, յանախ կրկնում և այլևս Լարսիսիանն ճշմարտություն դարձած է այն, թե առանց մշակոյթի ազգ չկայ: Մշակոյթը ազգի մը գոյութեան ու զարգացման անհրաժեշտ պայմանն է: Անով է, որ ազգ մը հաղորդակից կ'ըլլայ և կը միանայ մարդկութեան: Միևնոյն ժամանակ մշակոյթը կ'ամրապնդէ և կ'ապահովէ ժողովուրդի մը գոյութեան հիմերը:

Հայ ազգի պարագային՝ կրնանք անվարան ըսել, թէ հայ մշակոյթը հայ ազգին համար ինքնապաշտպանութեան ամենէն ամուր ու զօրեղ խորհիւսերէն մեկը եղած է: Ինչպես անցեալին, ներկայիս ալ մեր մշակոյթը մեր ազգային գոյարեւման կոտանն է:

Ինչ կը վերաբերի հայ լեզուին, ան հայ մշակոյթին ստորագրող ամենէն կարեւոր ազդակներէն մեկն է: Անկասկած մեր մշակոյթի պահպանման մեջ հիմնական դեր ունեցած է հայերէն լեզուն: Մեր լեզուն միայն հաղորդակցութեան գործիք չէ եղած, այլ նաեւ հայ ժողովուրդի հոգեբանութի-

ւնը, խառնումը, բարոյական իմացումները, չգրումները, յոյզերը, փառասանքներն ու բերկրանքները արփայարփող միջոցը եղած է: Մէկ խօսքով, հայ լեզուն՝ հայ ազգը ուր ազգերէ զայտորոյ գլխատր յարկանիչներէն մեկն է:

Հայերէն աշխարհարարի հիմնադիրներէն Խաչատուր Աբովեան աւելի քան մէկուկէս դար առաջ կը հարցադրէր «Ախ, լեզուն, լեզուն... լեզուն որ չըլլա, մարդ ինչի՞» նման կ'ըլլայ... ազգ մը պահողը, իրարու միացնողը լեզուն է ու հաւարքը»: Ապա մեր անմահանուն գրագետը այսպէս կը պարզամէր «Տասը լեզու սորվիր, սակայն քու լեզուն հաստատ պահէ»:

Անարարակոյս, մեր հնադարեան բարբառը՝ մետոպաշունչ ոսկեղենիկ լեզուն, ամենազօրեղ և ամենազոր ազդակներէն մեկն է հայ ոգիին, հայ մտածումին ու հայ գիտակցութեան: Ան մեր ազգային փոնմային արմարաններէն մեր հոգեմտաւոր աշխարհին աւիշ հասցնող մայր երակ է:

Ճշիկ չենք գիտեր, քայց կ'ըսուի, թէ ներկայիս աշխարհի վրայ քանի

մը հազար լեզուներ և բանի մը հազար ալ բարբառներ կը գործածուին:

Անցեալ տարուան փետրուարին, Իսնեաքոյի «Աշխարհի Վրասնգլած Լեզուներու Եղկերոնային Աթլասը»-ը «Հասարակական վրասնգլած» կարգավիճակը կու տար արեւմտահայերէնին: «Հասարակական վրասնգլած» կը համարուին այն լեզուները, որոնք այլեւս չեն ուսուցուիր մանուկներուն իբրեւ մայրենի լեզու իրենց երկիրներուն մէջ: Այս դասաւորումին շարժանիչներէն մէկը այդ լեզուն խօսողներու քուսքանակը և ընդհանուր բնակչութեան հետ բաղդարելով, այդ լեզուն խօսողներու փոքունն է: Իսկ լեզու մը «մեռած» կը համարուի, երբ որոշ ժամանակ այդ լեզուն սերունդէ սերունդ չի փոխանցուիր:

Արեւմտահայերէնի տագնապը ստեղծուեցաւ Յեղասպանութեան հետեւանքով. 1915 թուականէն առաջ, քրքրահայութիւնը մեր ժողովուրդին գրեթէ կէսն էր: Թուրքոյ կողմէ գործադրուած հայկական Յեղասպանութեան հետեւանքով հայութիւնը ոչ միայն մէկուկէս միլիոն զոհեր տուաւ, այլ նաեւ իր բնաշխարհին ու մշակութային զանգեղէն շարքերը կորսնցուց: Յեղասպանութենէն վերապրող «Մնացորդը» վկայ դարձաւ նաեւ արեւմտահայերէնի նահանջին, որ այսօր կը գրկուի կորստեան զանգեղէնին:

Ներկայիս աշխարհի հայութեան թիւը կը հաշուի տասը միլիոն, որոնցմէ վեցէն եօթը միլիոնը Մայր Հայրենիքէն դուրս կ'ապրին: Սփիւրքի զանգուածին կէսէն ավելին հայախօս չէ, իսկ հայախօսներու ջահջահիչ մեծամասնութեան համար արեւմտահայերէնը ամենօրեայ գործածական լեզու չէ: Իրողութեանց լոյսին ներքեւ,

արեւմտահայերէնի այս տխուր վիճակը ազգային ողբերգութեան մը տարողութիւնը ունի:

Տուեալ պայմաններուն մեջ, ի՞նչ կարելի է ընել, որպէսզի արեւմտահայերէնը «Մեռեալ լեզու» չդառնայ և անոր կենսունակ շարունակականութիւնը ապահովուի: Դիւրին պատասխան չունի այս հարցումը, բայց սփիւրքահայութիւնը իր ուշադրութիւնը սեւեռելու է հետեւեալ կէտերուն վրայ.

Արեւմտահայերէնը պահպանելու ամենէն կարեւոր ազդակներէն մէկը հայակերթութիւնն է. հայեցի դաստիարակութիւնը անտարակոյս կը սկսի հայ տունէն և անկէ կը տարածուի հայ դպրոցի, հայ եկեղեցիի, հայ կազմակերպական կենտրոնի և հայ մամուլի տարբեր բնագաւառները:

ՀԱՅ ՏՈՒՆԸ: Ան նախ և առաջ հայ ըլլալու է: Արտաշխարհի հայ գաղութներու մեծամասնութիւնը կը դիմագրաւէ վրասնգ մը, որուն հետեւանքները կը սպառնան մեր հաւաքական գոյութեան: Արիկա մեր երիտասարդներու խառն ամուսնութիւնն է: Այս ամուսնութիւններու միտք շարժանք զգայուն հարց մըն է, որովհետեւ մեր հարազատներէն կամ բարեկամներէն օտարազգի անչերու հետ ամուսնացող զանգուածին թիւը օրէ օր կ'ավելնայ: Բացառութիւնները յարգելով հանդերձ, հարկ է հաստատել, թէ խառն ամուսնութիւններով ոչ հայ ընտանիք կը կազմուի, ոչ հայեցի դաստիարակութիւն կը ջանքուի և ոչ ալ հայ լեզու կը պահպանուի: Միս կողմէ, հայը հայուն հետ ամուսնանալով ալ անպայմանօրէն հայեցի դաստիարակութեան ու հայ լեզուի գործածութեան երաշխիք չկայ: Դժբախտաբար, հայերէն լեզուն գործա-

ՄԵՐՈՒՄԵՆ ԵՄԵՐ

ծող կարգ մը գաղութներէ՝ արեւմտայան երկիրներ հաստատուող կարգ մը հայ ծնողներ, փոխանակ իրենց ընտանեկան հարկերէն ներս հայերէն խոսելու իրենց զուակներուն հետ, կը նախընտրեն իրենց բնակած երկրին լեզունով հաղորդակցիլ: Անոնք այս մեղադրելի և դատապարտելի ընթացքը կը ջանան արդարացնել այն ճիշդակերպ, թէ իրենց զուակներուն հայերէն խօսիլը կրնայ արգելք ըլլալ բնակած երկրի լեզուն լաւ սորվելուն:

Կան նաեւ կարգ մը ծնողներ, որոնք հայեցի դաստիարակութիւնը և հայ լեզուի գործածութիւնը պատահականութեան ջգած են: Այս մտայնութեան փէր մարդիկ սովոր են մտածելու և յայտարարելու. „Եթէ զվակս կ'փափաքի հայ ըլլալ ու հայերէն խօսիլ ապագային, ինք անչափ թող որոշէ: Ես իր ազատ կամքը և նախասիրութիւնները չեմ ուզեր կաշկանդել,“: Այս „Օակ տրամաբանութիւնը, յար և նման է այն ինքնախարտութեան, որ ծնողներ իրենց զավակները բացարձակապէս ուսուցնել և կրօնական դաստիարակութենէ զրկելու են միջին այն արեւն, երբ անոնք հասուն տարիքի մէջ, իրենց կամքով որոշեն ուսման հետեւիլ և իրենց կրօնքը ընտրել:

Այլեւս յարկ է, որ արեւմտահայերէնը փրկելէ առաջ, աշխարհելու ենք փրկելի հայ ընտանիքը, հայ ծնողքը: Եթե կարենանք ազգային արծաճաստութեան զգացում արթնացնել անոնց մէջ, եթէ կարենանք պատասխանատուութեան զգացումները ստեղծել, որ իրենց սրտացած ժառանգութիւնը չմտնեն, այն արեւն հայապահպանման ու լեզուի պահպանման երկնակամարին վրայ յուսոյ նշոյլներ

ԳՐԱՆՔ ԳՈՒՄԵՆԵՐ

կ'երեւան:

ՀԱՅ ԳՊՐՈՅԸ: Հայ դպրոցը նախապարտուած է ըլլալու ամենէն ուժեղ միջոցներէն մէկը՝ լուսատրեւելու ապագայ հայ սերունդներու ուղին: Ան ամենէն ազդու միջոցներէն մէկն է հայ լեզուի ուսուցման: Հոն է, որ մեր մարդաշ սերունդները կը սորվին իրենց մայրենի լեզուն, կը հաղորդուին Մատրոպեան տառերու հետ և հայտնի կը մեծնան: Ան հայ մանուկին „Երկրորդ տունն, է: Անոր կենսական նպատակներէն մէկն ալ հայեցի դաստիարակութիւնն է, հայ աշակերտին ջանքում հայկականութիւնը: Հայեցի դաստիարակութեան հիմը կը կայանայ հայերէն լեզուի ուսուցման ու մայրենի լեզունով հայ ոգիի և ոգեկանութեան ջանքերուն մէջ: Սփիւրքի դպրոցներուն մէջ է, որ առաւելաբար արեւմտահայերէնը կ'ուսուցուի: Հետեւաբար, արտասահմանի հայ դպրոցը կանգուն պահելով է, որ պիտի կարենանք պահպանել արեւմտահայերէնը, իսկ դպրոցը կանգուն պահելու համար անհրաժեշտ է հայթայթել փոքրահասակ զօրեղ միջոցներ, որպէսզի հնարաւոր դառնայ որակաւոր ուսուցիչներ, որակաւոր դասաւարտագիրներ ու դասագիրքեր ապահովել:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ: Հայ Եկեղեցին, ի վաղուց յետէ, զօրաւոր ազդակ մը եղած է հայ ազգի քաղաքակրթութեան և ստեղծագործ յառաջադիմութեան: Ան օժտած է մեզ՝ մեր լեզուն արտայայտելու ուրոյն նշանագիրներով ու զօրեղ միջոց մը հանդիսացած է մեր ազգային գոյութիւնը մշտնջենաւորելու: Ընդդէմ հայ այրութեան զարգացած և ճողացած է հայ գրականութիւնը և դպրութիւնը:

Ինչպէս անցեալին, նոյնպէս ներկայիս, Հայ Եկեղեցին իր յարուկ դե-

ՄԵՐՈՒՄԵՆ ԵՄԵՐ





KHACHATUR ABOVYAN

AMUZING SHORT STORIES

5. The Armless Craftsman

Forty years ago there was a man in England, named Kingston, who didn't have arms and was doing his work with his legs. Many people couldn't write so clearly with their hands, as Kingston did with his legs. He used to take the tea-cup to his mouth and hold the fork and the knife with his legs. He would make fire, put on his clothes, milk the cow, straddle and curb the horse - all doing with legs. Even most people's arms don't have so many skills.

10.

Two French officers came across on a bridge and bumped terribly. One of them was very short and miserable, the other one was corpulent and of large stature. The short man became angry and hit the other one with a stick several

times. But this man didn't get angry.

"You know, that this kind of shame must be atoned with blood between us; but this time let's atone it with water, it's no harm", - he said and silently seizing the man's robe, threw him into the water over the bridge like a ball. He went his way and the other one went to heaven.

13.

A preacher was giving a sermon in the church, saying that everything God has made is perfect and has no defects. A humped man, who was very funny and amusing, thought of playing a trick on the preacher. As the preacher went out and stood at the doors, the humped man praised the sermon and turning his humped back in front of him, said: "Mister Pastor, if God has made everything perfect, what

րակապարտութիւնը կրնայ ունենալ արեւմտահայերէնի պահպանման մեջ: Իր բնույթով, մասնովով, իր կիրակնօրեայ կամ շաբաթամիջի միօրեայ դպրոցներով ան կրնայ սալարեւ այս կարեւոր առաքելութեան: Անոր՝ Աստուածաշունչ Մարեանի արեւմտահայերէն լեզուով թարգմանութիւնները, որոնք որոշ տեղ կը գրասեն հասարակաց ժողովուրդի առօրեայ կեանքին մեջ, ինչպէս նաեւ կրօնական-դաստիարակչական և ազգային բնոյթ ունեցող հրապարակութիւնները ապահովաբար պիտի նպաստեն արեւմտահայերէնի գործածութեան ու շարունակականութեան:

Ինչպէս անցեալին, ներկայիս ալ, Հայ Եկեղեցին աւանդապահը ըլլալու կուրսած է մեր կրօնական և ազգային բարքերուն ու արժէքներուն, որոնց անբաժան մաս կը կազմէ Հայ Լեզուի արեւմտահայերէնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Հայ իրականութեան մէջ ծնունդ առնող ու ծառայող իւրաքանչիւր մշակութային, քաղաքական, քաղաքական, կրօնական, մարզական կամ այլ տեսակի կազմակերպութիւն, հիմնարկ կամ հասարակութիւն իր որոշ դերն ու ազդեցութիւնը ունի մեր հավաքական կեանքին մէջ: Իրենց կոչումին զիտակից բոլոր հայ կազմակերպութիւնները՝ մեր մշակութի այս կամ այն մարզը մշակող խմբակցութիւններ են, որոնք կրնան արեւմտահայերէնի պահպանման սալարք հանդիսանալ:

ՀԱՅ ՄԱՍՏՈՒԼԸ: Հայ մամուլը ոչ միայն հայ հասարական կեանքի հայեցիլն է, այլ նաեւ մեր ազգային մտա-հոգութիւններուն, չգրումներուն ու

տեղեկութիւն հանդիսարանն է: Ան հիմնական ազդակներէն մէկն է մեր գրական լեզուին տեսական զարգացումին: Ան որոշապէս ճոխացուցած է և դեռ կը շարունակէ ունեցանել ու հարստացնել արեւմտահայերէնը: Անհրաժեշտ է, որ հայ մարդիկ թեւ և թիկունք կանգնին անոր, որպէսզի ան ալ իր հերթին ծառայէ հայ լեզուին ու մշակոյթին:

Արդեօք սփիւրքահայեր որքա՞ն արեւն պիտի կրնան պահպանել արեւմտահայերէնը իրենց ապրած բազմամշակութային ընկերութեանց մեջ: Չենք գիտեր: Որոշապէս այս պայքարը հոսանքն ի վեր թիավարելու աշխատանք է, որուն լծուած են սակաւաթիւ քայց իրենց ազգի ինքնութեամբ և իրենց ազգային պատկանելիութեամբ հայրեր հայեր: Այս հայրերիները արժանի են ամէն գնահատանքի և քաջախորտեան: Անոնց օրինակը պէտք է ներշնչման աղբիւր դարձնել այն բոլոր հայրերիներուն, որոնք անբարեբեր, թերահաւատ, յուսալքուած են մեր ազգային ծառանգութեան նկատմամբ:

Ժամանակն է, որ բոլոր բանիմաց, զիտակից ու սրտացաւ հայեր չեռք չեռքի, միտք միտքի, սիրտ սրտի գուսած՝ միասնակ պայքարելու օգտարամտութեան, օգտարախօսութեան և ուժացման դէմ՝ հնարատր բոլոր միջոցներով: Այլապէս, դարերու ընթացքին, այն ինչ որ մեր թշնամիները իրենց զուրմով չկրցան ընել մեզի, մենք մեր շուրմով պիտի ընենք մենքմեզի, քանի մը սերունդներու չեռքով:

«Թանրեր» թիվ 35, 2012թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՍՏՈՒՆ ԵՐԵՎԱՆ

ՄԱՍՏՈՒՆ ԵՐԵՎԱՆ

is this? Why has he given me this defect?" The Pastor guessed his intention and patting his shoulder said: "What defect, dear? Don't you see that God has created you perfectly humped?"

15.

Alexander the Great was having a meal with his officers. Suddenly he asked a question: "What thing is it that lacked last year, is lacking this year and will lack next year?" "Oh, I know, - said a clever officer, - it's just our salary". The king liked this answer so much that ordered to give him his salary and a gift as well.

18.

A man was fed up with his wife as she had made him angry so many times and had given him so many troubles. She came to the right way neither by asking, nor by begging or advising. One day, when he had no other way out, he gave her a good beating. Panic-stricken and screaming she threw herself into her father's house and complained of her husband. Knowing the evil character of his daughter the father became very hurt.

"How dared he beat my daughter? Look how I'll punish him" - he said and taking a stick terribly beat her. "Go now and tell your husband, my daughter, that we have

got even now; he beat my daughter and I beat his wife".

19.

A king was angry with an archimandrite and didn't want to see his face. The archimandrite drew many people into the case but there was no way out. At last he took heart and went to the king. As soon as the king saw him, he turned his face and wanted to enter the house, but the archimandrite cried from behind:

"Thank you very much, very much, King".

"What for?" - asked the king angrily.

"For that now I know that you are not my enemy".

"How do you know?" - asked the king.

"Because you turned your back towards me, and you haven't done so to even one enemy".

These clever words gladdened the king's heart and he started loving the archimandrite again.

22.

A man asked his relative how he was getting on. "Like in heaven" - answered the latter. The man who had asked the question was astonished by the fact that fortune had smiled on him so suddenly, as he was very poor. "How did it happen?" - asked the first in surprise. "Why, how... we don't eat, nor

drink anything, that's how" - answered the man.

24.

Alexander of Macedonia wanted to destroy a city. One of his teachers who lived in that city went to beg the king for the city. As soon as Alexander saw him, he became very angry and swore to do the contrary to whatever he said. "Then I ask you to ruin this city and destroy it" - said the wise man, thus saving the city.

27.

A general entered a city. All the citizens came to welcome him. Some Jews had also gathered at the gates, but the general ordered to chase them out. "They are those who tortured our Christ, let them disappear out of my sight" The Jews were very hurt to receive such treatment, but they said that they had brought 4000 golden coins as a gift. As soon as the commander learnt this, he ordered them to come in immediately. "What could they do! - he said, -during the crucifixion they were not even born".

36.

A pot-bellied man fell into mud and couldn't get up from it. At that moment another man was passing by him. The poor man asked him to

come and help him get out of the mud. "No problem, - said the passenger, - I'll help you, but that place is very dirty, get up and step aside; then you are welcome; I'll spare no effort to help you".

43.

A wigmaker asked a king to wear the wig he had made. All the people in the court had wigs made for them and the wigmaker became quite rich. Another man, who was making wooden legs, heard about this and went to ask the king to buy his wooden legs and wear them.

49.

A young man came to a marsh. A peasant was passing by him and the young man asked him whether the marsh was firm or not.

"It's well known that the bottom of the marsh is very firm", - answered the sly peasant.

As the young man moved a bit forward, his horse sank into the marsh up to the ears. The young man blazed with anger towards the peasant:

"You, scoundrel, didn't you tell me that the bottom is firm?"

"Well, it is known that the bottom is firm, but you haven't reached the bottom yet, how could you know?", - answered the peasant scratching quietly his head.



## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆ




ՎՈՒՄԻՆԱԿԱՆ ԳՐԱԿՆԵՐ

*Արվյանների տոհմատան մանրակերտը*

Արվյանների տոհմատան մանրակերտը  
նախկինում ընտանիքի անդամների  
համար նախապես ծառայել է որպես  
գրադարան, որտեղ պահվել են ընտանիքի  
մասին տարբեր տեսակի փաստաթղթեր  
և փոքրիկ արվեստի ստեղծագործություններ  
և այլն. այսօր այն արդեն միայնակ  
մեծ թանգարան է դարձել, որտեղ  
պահվում են ընտանիքի և արվյանների  
մասին տարբեր տեսակի փաստաթղթեր  
և փոքրիկ արվեստի ստեղծագործություններ  
և այլն.



## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆ



ՎՈՒՄԻՆԱԿԱՆ ԳՐԱԿՆԵՐ

*Տոհմատան թոնրատուն*

Տոհմատան թոնրատուն  
նախկինում ընտանիքի անդամների  
համար նախապես ծառայել է որպես  
գրադարան, որտեղ պահվել են ընտանիքի  
մասին տարբեր տեսակի փաստաթղթեր  
և փոքրիկ արվեստի ստեղծագործություններ  
և այլն. այսօր այն արդեն միայնակ  
մեծ թանգարան է դարձել, որտեղ  
պահվում են ընտանիքի և արվյանների  
մասին տարբեր տեսակի փաստաթղթեր  
և փոքրիկ արվեստի ստեղծագործություններ  
և այլն.

# ՏԱՐԱԾԱԵՐՋԱՆԱՅԻՆ ԽՃԱՆԿԱՐ

Այս նյութը հավակնություն չունի ներկայացնելու փարածաշրջանային իրադարձությունների, քաղաքական, ռազմական և փնտրական փնտրողների ամբողջ քարտեզը: Ընդամենը ներկայացվում են մարտ-օգոստոս ժամանակահատվածի այն դրվագները, որոնք այս կամ այն չափով կարող են այդ օրերի քաղաքական ընդհանուր փրամադրությունն արտահայտել: Նյութում առկա շատ խնդիրներ դեռևս իրենց լուծումը չեն գտել և հավանաբար մոտ ապագայում էլ դժվար կլինի անորոշության պարունեչը հաղթահարել:

## ԺԱՄԱՆԱԿԻ ԹԻՎՈՒՆՔՈՒՄ ԹԱՔՆՎԱԾ

Բոլոր առումներով հայ-ադրբեջանական պատերազմը շարունակվում է և հակամարտությունը կարգավորելու միջազգային հանրության բոլոր ջանքերն ու հույսերն ընդամենը պրոպագանդային կախարհական շրջանակի

մեջ: Առայժմ առավել հավանականը շրջանակի էլ ավելի նեղացումն է, քանի որ թուրքական հեռուստատեսությունը հարցազրույցում Իլիամ Ալիևը՝ հավատարիմ իր բարձրագույն ռեժիսորի, չի զլացել կրկին հայտարարելու, որ Ադրբեջանը երբեք թույլ չի տա, որպեսզի «Ադրբեջանական հողերում երկրորդ հայկական պետություն ստեղծվի»: Սիս այսօրվա Ադրբեջան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

նի իրական նկարագիրը՝ ազդեցիկ և չհանդուրժող, մնացած ամեն ինչը նեյմիսների շարքից են: Եվ խնդիրը պայմանավորված չէ միայն Ղարաբաղյան հակամարտությամբ: Այդ երկիրը ավելի հեռուստա հավակնություններ ունի: Վերջերս ազերիների մեջլիսը քննարկում էր երկրի անունը փոխելու հարցը: Ազերի պարզամտությունները առաջարկում էին Ադրբեջանը վերանվանել Հյուսիսային Ադրբեջան, որի պարագայում պիտի ենթադրվեր նաև Հարավային Ադրբեջանի գոյությունը, որը, ըստ ազերիների, պարսկական Արապականում էր լինելու: Նպատակը որքան էլ քողարկված, հասկանալի է... Ինչ իմաստավոր իրադարձություններն ինչպես կդասավորվեն և հնարավոր կլինի քննարկել արդեն երկու ադրբեջանների միավորման հարցը: Եվ չնայած Իրանը ազերիներին զգուշացրել է հեռու մնալ նման արկածախնդրությունից, նույնիսկ սպառնացել է հակառակ պարագայում Ադրբեջանը միացնել Իրանին, միևնույն է, ազերիները, քնած թե արթնի, իրենց ուղեղներում շարունակում են մերսել այդ գաղափարը: Նույնն է և Արցախյան հակամարտության դեպքում: Ուրիշի փարածքի վրա այք զցողը հազիվ թե ընդունի երբեմնի իր մի հարվածի իրենից անջատվելը, մանավանդ եթե այդ հարվածը հայկական է: Ուստի հակահայ քարոզությունը ոչ միայն շարունակվելու է, այլև ավելի քարոզելի դրսևորումներ է ունենալու: Պատերազմն իսկապես չի ավարտվել: Պարզապես ազերիները պարտվելուց հետո ավելի զգուշավոր են դարձել և որոշել են անմնացորդ ապավինել թուրքական ռազմավարությանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի արագործնախարարների հանդիպմանը Ադրբեջանը կրկին կողմ էր փառաժառանգանային խաղաղ համագործակցությանը, ինչը միջազգային հանրությանը ազերիների մայրուցած հերթական քննարկ էր: Նման քննարկները շարունակվելու են: Իրականում ազերիները պարտավորվում են պատերազմի: Ժամանակի թիկունքում բարձրված, ավելի շուրջ դարան մտած, սպասում են իրենց «աստիճանային» ժամին, վստահ, որ ժամանակն իրենց «դաշնակիցն» է: Նման ինքնավարա-հոթյան աղբյուրը նավթարդյուններն են, ինչը ազերիներին ստիպում է մտածել, թե կարող են ժամանակին էլ կաշառել:

### ՄԵԿԸ՝ ԲՈԼՈՐԻ, ԲՈԼՈՐԸ ՄԵՎԻ ԴԵՄ

Ավարտվեց ՀՀ Ազգային ժողովի պարզամտությունների քննաժողովների առաջադրման ժամկետը: Ընկրություններին կմասնակցեն 9 քաղաքական ուժեր ու 100-ից ավելի անհատներ: Ասել կուզի քարոզարշավի ընթացքը արագություն է հավարում, և շուրջով ընկրողներին կներկայացվեն Օստրապ Բենդերի հայրենի Վասյուկիի քաղաքի մոտ փարբերակներ: Թեկնածուներից յուրաքանչյուրն իր Վասյուկին կառաջադրի, որը չի փարբերվի կամ առանձնապես չի փարբերվի մյուսների ծրագրերից, որովհետև բոլոր փարբերակներում էլ կարևորվելու է օրենքի գերակայությունը, ժողովրդավարության սկզբունքների հաստատումը, սոցիալական արդարությունը, փարբեր գույնի

ու շափի իրավունքների պաշտպանությունը և այլն, և այլն: Կարևորը խոստումների չհակերպումն ու առաջությունն է, առանձին ղեկավարում կարևոր է նաև դրանց կայրիակա-նությունը: Այս ամենը թերևս փառա-մարանական է ու հասկանալի, միայն հասկանալի չէ՝ ինչո՞ւ, եթե բոլորի նպատակը նույնն է, բոլորը երկրի ու ժողովրդի բարգավաճումն են ուզում, ինչո՞ւ են խմբերի բաժանվել, երբ մի-ահամուռ ուժերով հնարավոր կլինեք գոնե խոստումների մեկ քառորդն իրականացնել, չէ որ «Գեղ կանգնի՝ գերան կկոտրի»: Սակայն պետք չէ ընկրությունների հոգեբանությունը առօրյայի հեղ շփոթել: Ընկրություններն առօրյայից փարբերվող իրենց կազմախոսությունն ունեն, համա-չայն որի՝ կարելի է հակառակորդների հեղ նույնը ասել, բայց ուրիշ նպատակներով: Այնպես որ, համախմբվելու փարբերակը բացառվում է: Մյուս կողմից էլ՝ յուրաքանչյուր ընկրություն լուրջ մրցակցություն է ենթադրում: Ցավոք, մեզանում այս կանոնը կամ անտեսվում է, կամ էլ ընթացքում այնքան է չեղարկվում, որ համարյա կորցնում է նախնական քվանդակությունը: Մրցակցությունը քաղաքակիրթ հարաբերություններ է ենթադրում, ինչն, ավաղ, ավելի ցանկությունների բլուկում պիտի փնտրել: Մեր քեկնածուները չեն մրցում՝ կո-վում են, երբեմն այնքան կատաղի, կարծես ոչ թե նույն երկրի, նույն ժո-ղովրդի Ազգային ժողովի պարզա-մտությունների քննաժողովն են, այլ այլադավան բճամի երկրների ներկայացուցիչներ, որոնց հակամար-տությունը հազիվ թե առանց ռազմա-կան ուժի կիրառման հնարավոր լինի

լուծել... Կովում են մեկը՝ բոլորի, բոլոր մեկի դեմ: Եվ այդ ամենով հանդերձ, քաղաքական ուժերն ու անհատ քեկնածուները ևս մի ընդհանրու-թյուն ունեն: Չկա մեկը, ով չքաղաքա-չայնի արդար, քափանցիկ և ժողովր-դավարության հիմունքներին հավա-րարիմ ընկրությունների կարևորու-թյան մասին: Այս հարցում փառա-չայնությունները սրվել չունեն, և բո-լորը համակարծիք են, ուստի ամե-նապարզամիտ փրամարանությունը անզամ, ընկրախախտումները պի-տի բացառվեն: Բոլորը նույնն են ասում և բոլորն էլ բացահայտորեն կասկածում են մյուսներին: Սրաց-վում է, որ եթե բոլորը համակարծիք են, նշանակում է հնարավոր չէ առանց կեղծիքների: Եվ եթե ուրիշ երկրներում ընկրու-թյունները գոնե հաղթողների համար փոն են, ապա մեզանում քեկուզ աննշան ընկրու-թյունը վերածվում է համազգային աղետի, որի հետևանքները համախ-հնարավոր չի լինում նույնիսկ միջն-մյուս ընկրությունները հաղթահա-րել: Դրա համար էլ չքննարկվող օրենքի պես մի բան պիտի մեր մեջ գերակայենք. պարտվողներն էլ, հաղթողներն էլ մերոնք են, մեզանից են ու արյունակից: Եվ մեկ էլ հիշենք, որ նույնիսկ ամենալավ ընդդիմու-թյունը, իշխանության գալով՝ վատն է լինելու, որովհետև լավ իշխանություն չի լինում: Կարևորը ժողովրդի հեռա-տեսությունն է, որ չվաճառեն ոչ մի-այն իրենց, այլև իրենց երեխաների ապագան:

### ԵՐԲ ԿԲԱՅՎԵՆ ԴՈՆԵՐՆ ՀՈՒՍՈ

Միջխալում ընդդիմադիրների և կառավարական ուժերի հակամար-տության հաշտեցման վերջին փորձը ՄԱԿ-ի և արարական երկրների պարվիրակ Բոֆի Անանի այցն էր Դամասկոս: Նրա խաղաղարար ծրագիրը՝ հրադադարի հաստատում, մարդասիրական կազմակերպու-թյունների հակամարտության գոյի մուտքի արդունություն և այլն, քն-նարկվել է նաև այս կիրակի Ստամ-բուլում ավարտված «Միջխալի բարե-կամներ»-ի հավարում: Հավարը մի-աժամանակ նշել է, որ ծրագրի իրա-կանացման համար պետք է որոշակի ժամկետ սահմանվի, որի ընթացքում եթե փոփոխություններ պետի չունե-նան, հարցը պիտի ներկայացվի ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի քննարկմանը: Միայն հայրենի չէ՝ ինչ միջոցառումների շնորհիվ են մասնա-կիցները հասնելու իրենց կողմից ակնկալվող փոփոխությանը: Մի կող-մից՝ երկխոսության, բանակցություն-ների կոչեր, մյուս կողմից արվում է հնարավորը՝ ընդդիմադիրներին նոր քախումների հրահրելու: Մի կողմից կառավարությունը հայտարարում է, որ կառավարական գորբերը պաշտ-պանելու են երկրի ինքնիշխանու-թյունն ու ապահովելու են խաղաղ բնակչության անվտանգությունը, մյուս կողմից Սաուդյան Արաբիան, Կապարը և այլ երկրներ խոստանում են սպառազինություններ, ֆինանս-ներ և այլ միջոցներ փրամադրել ապստամբներին: Իրականությունն այն է, որ «Միջխալի բարեկամներ»-ը ժողովրդավարության կոչերի ներքո

ԳՅՈՂ ԳՐԻՊԻՆԳՆԻ

ՂՈՅՈՍԻ ԴՈՒՍՈՒՆ

ԳՅՈՂ ԳՐԻՊԻՆԳՆԻ

ՂՈՅՈՍԻ ԴՈՒՍՈՒՆ

շարունակում են իրենց փնտրական շահերը պաշտպանող քաղաքականությունը, որի առաջին պայմաններից մեկը հեշտ դեկավարվող ու հարմար ռեժիմի հաստատումն է: Այս հարցում անհասկանալին Թուրքիայի դիրքորոշումն է, երբ այդ երկրի արտաքին գործերի նախարարն հայտարարում է, որ «Միջին Ժողովուրդը մենակ չէ, և մենք ամեն ինչ անելու ենք փարսածաշրջանում արյունահեղությունը դադարեցնելու համար: Մեր բարոյական պարտքն է՝ իրենց իրավունքները պաշտպանող մարդկանց կողքին գրգռել ու աջակցել նրանց»: Նախ չի հասկացվում, թե Թուրքիան հակամարտող ո՞ր հայրվածին է ժողովուրդ համարում՝ ընդդիմադիր, թե՞ իշխանապետ, եթե Միջինում իր դեպքերումը փակել է, և երկրորդը՝ ինչո՞ւ, երբ դարաբաղձիներն են իրենց իրավունքները պաշտպանում, այն էլ ոչ թե հայրենակիցներից, այլ դարավոր բշտանուց, դա նրան այնքան էլ դուր չի գալիս: Բայց սա արդեն ուրիշ թեմա է, իսկ ինչ վերաբերում է սիրիական իրադարձություններին, ապա ցավալի է, որ հակամարտության զոհերի թիվն, ըստ ՄԱԿ-ի տվյալների, արդեն 9000-ից անցել է, և որ առավել էական է՝ վրանագված է փեղի հայ զաղուքի գոյությունը: Միջինումը, որ երկրի բնակչության մեկ տոկոսն են, արդեն երկու զոհ են տվել: Արաբագետ Արմեն Պետրոսյանը համոզված է, որ անգամ Միջինումը նախագահ Բաշար ալ Ասադի փառալուսնի դեպքում, Միջինումը հայ համայնքը չի վերանա: Կարող է նվազել, բայց ոչ վերանալ: Հասկանալի է, որ բոլոր հայերը միանգամից չեն արտագաղթի: Մակայն

սիրիական զարգացումների անկանխարեսելիությունը չի բացառում արտագաղթի առավել մեծ շափերը, ինչը էականորեն կթուլացնի ազգային կառույցների գործունեությունը, որի անցանկալի հետևանքները դժվար չէ կռահել: Կորուստն, իրոք, ցավալի կլինի, քանի որ Միջինումը հայ զաղուքը Միջուրքի մեր առավել կազմակերպված օջախներից է: Եթե իրադրությունը չկայունանա, և հրահրումները նոր թափ հավաքեն, ապա հավանականն այն է, որ մեր հայրենակիցներից շատերը նորից արկաված կլինեն օդար ատերում իրենց բախտը փնտրել, ինչը փարսածաշրջանում էսպես կթուլացնի հայոց դիրքերը: Ուստի մնում է հուսալ, որ Միջինումը բարեկամ ժողովուրդը, իր իմաստությունն ու սեփական ուժերին ապավինելով, կփորձի դժվարություններն հաղթահարել ու իր ազգային համերաշխությունը գրգռել:

**ԿԵՂԾԻՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՀԱՎԵՐԾ ՇԱՐՈՒՆԱՎԵԼ**

«Նոր սկզբի համար ամենապրագմատիկ լուծումը անցյալից կառչած չմնալն է: Ցավերը գայրույթ են ծնում, գայրույթը՝ արեւելքում, իսկ արեւելքումը՝ վրեժխնդրություն: Հենց այդ պատճառով անցյալի ցավերը փորփրելը որևէ մեկին օգուտ չի փառ»: Այս խոսքերը Թուրքիայի խորհրդարանի խոսնակ Ջեմիլ Չիչեքի՝ Թուրքիայում փեղի ունեցած «Ցավը կիսելու և վերքերը բուժելու առաջին քայլ» անվանումով գիտաժողովի ելույթից են, որում պարզորոշ նկատելի է թուրքական պաշտոնական

ոճի փոփոխությունը, որը հայ-թուրքական հարաբերությունների նոր մարտավարություն է ենթադրում: Մինչ Չիչեքն էլ նկատելի էր, որ Թուրքիան՝ միջազգային հանրության փակակն ճնշման փակ, աստիճանաբար ջանում է հրաժարվել 1915 թվականի դեպքերը ժախջելու իր կոչը քաղաքականությունից՝ փորձելով ծանոթ բովանդակությունն առավել բարեկիրք հանդերձանքով ներկայացնել: Եվ ավելի լավ փարքերակ, քան անցյալը մոռանալու փառն է, չես հորհրդի: Չկա անցյալ, չկա և խնդիր: Չկա անցյալ, չկա և պարաստիանափություն կրելու անհրաժեշտություն: Թուրքերը շարունակում են ապավինել իրենց դիվանագիտական խորամանկությանը՝ մոռանալով, որ այդ դիվանագիտությունն արդեն քանիցս հերքվել է ուսումնասիրվել է: Անցյալի մոռացումը նշանակում է ամեն ինչի գրոն: Առաջարկվում է մի քան որին թուրքերն իրենք պարտասպան չեն: Այսպես խոսքերը քիչ վճռորոշ են, այս պարագայում իրականը փաստերն են, իսկ փաստերը վաղուց թուրքերի դեմ են: Միայն հայ-թուրքական սահմանի բացման հետ կապված պատմությունները հերքել են՝ համոզվելու, որ թուրքերին դեռ շարք դրական լիցքեր են պետք գոնե գրոյին մոտենալու համար: Եվ այս ֆոնի վրա մտածել, թե հայերը կարող են մոռանալ միլիոն ու կես նահապետների հիշատակը և պահանջարկեր չլինել, առնվազն մանկամարտություն է: Աշխարհն էլ աստիճանաբար ավելի զգայուն է դառնում հայի դատի նկատմամբ, ինչն, անշուշտ, իր որոշակի ազդեցությունն է թողնում թուրքական միջավայրի «առողջացման»

և թուրքերի փրամադրությունների վրա: Գուցե հենց սա է պարճառը, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանության թեման այլևս փարք չէ, և Թուրքական քաղաքականության նոր շարքն էլ միայն սև գույնը չունի: Բանն այնպես է հասել, որ Թուրքիայում գործող երկու կազմակերպություններ նախարեսում են ապրիլի 24-ին՝ 1915 թվականի հայերի սպանության ու զաղթի 97-ամյակին նվիրված միջոցառումներ անցկացնել: «Հայոց ցեղասպանության ճանաչումը բարոյական, իրավական, քաղաքական և սոցիալական պարտականություն է», - «Հուրիեթի» հետ գրույցում ասել է Մարդու իրավունքների կազմակերպության անդամ Այշե Գյունայուն: «Մերը չեն կարող հավերժ շարունակվել, եթե մենք ցանկանում ենք փեսնել ճշմարտությունը», - հավելել է նա: Այս իրողությունը լուր սկիզբն է այն ճանապարհի, որը Թուրքիային մոտեցնելու է իրական ճշմարտությանը: Գուցե այդ ճանապարհն ավելի երկար լինի, քան ենթադրվում է, գուցե այն այդպես էլ ասպաշխարանքի չհասցնի: Կարևորն այն է, որ Թուրքիայում ու նաև աշխարհում զգացել են այդ ճանապարհի կարևորությունն ու անհրաժեշտությունը: Թուրքիայում Հայոց ցեղասպանության նկատմամբ փոխանությունն, իրոք, փոխվել է: Տոնայնությունը, բայց ոչ բովանդակությունը, քանի որ խորքում համարյա անհաղթահարելի է թվում հայադյացությունը:

**ԱՆԱՎԱՐՏ ԽՈՂԵՐ  
ԱՎԱՐՏՎԱԾ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ**

«5-րդ գումարման Ազգային ժողովի ընկրություններն ավարտվեցին: Բաղաբաղական մի շարք ուժեր շահեցին, մյուսները կորուստներ ունեցան: Մասնավորապես ԲՀԿ-ն իր պարզամտությունների թիվը ավելացրեց 11-ով: ՀՅԴ-ն 16 մանդատի փոխարեն խորհրդարանում կունենա 6-ը: 2-ականով պակասեցին ՕԵԿ-ի ու «Ժառանգության» մանդատները: Նորությունը ՀԱԿ-ի մուտքը պիտի համարել, որը որոշակի հետաքրքրություն կհաղորդի Ազգային ժողովի աշխարհանքներին: Դեռ վաղ է ընկրությունների ընթացքի ու բուն ընկրությունների մասին ամբողջական պարկերացում կազմելը, բայց մի բան հաստատել է, որ շարքերի փշած փոկոսները միանգամից պայթեցին, կրկին ապացուցելով, որ քաղաքականության մեջ վրանգավոր է ոչնչով չհիմնավորված երևակայությանն ապավինելը, որ քաղաքականությունը ճշգրիտ հաշվարկների և մանրամասն մշակված ռազմավարության հաշվին է ապահովում անհրաժեշտ արդյունքները: Ընկրություններն ավարտվեցին, սակայն դրա արդյունքում չեղվորված հոգեբանական ինտրոյեկտիվ շարունակվելու է՝ փորձելով այս կամ այն երևույթների պարասիանները գրվել: Երկրի սոցիալ-տնտեսական վիճակից ելնելով՝ փոքր-ինչ զարմանալի է, որ չնայած իշխող կուսակցության նկատմամբ բնակչության դժգոհությանը՝ հենց նույն կուսակցությունն է ամենաշատ չայները հավա-

րում: Փաստը, հավանաբար, մարդկության բնավորության դեռևս չուսումնասիրված երևույթների շարքից է, կամ էլ հանրապետականին իրոք հաջողվել է ընկրողների վարահոսությունը շահել: Ինչնից, ՀՀ Ազգային ժողովի այս գումարման ընկրությունները միջազգային և տեղական դիտորդների կողմից արդեն որակվել են որպես քայլ առաջ ժողովրդավարության նախապրիին: Եվ իսկապես էլ, սա առաջին հայաստանյան ընկրությունն է, երբ դիտորդների քննադատությունը չի գերազանցում դրական որակումները: Ինչ վերաբերում է մասնակից քաղաքական ուժերին, ապա նրանք դեռ չեն շարժվում իրենց վերաբերմունքն արտահայտել թե՛ դիտորդների գնահատականների և թե՛ ընկրությունների ընթացքի մասին: Դեռ կլինեն միտիանգներ, մամուլի ասուլիսներ, լրագրային հրատարակումներ, որոնցով փորձ կարվի իր ցույց դնել հիմնականում խախտումները: Նաև մեղավորների նկատմամբ քրեական գործեր կհարուցվեն: Բոլոր չախտումների համար պիտի պատճառատրամություններ ու արդարացումներ գրվեն: Եվ սեփական պարտությունն արժանապատվորեն ընդունելու, մեղքը ուրիշի վրա չզցնելու իրողությունն այդպես էլ չի մերվի մեր իրականությանը, օրսար արյան պես չի ենթարկվի մեր օրգանիզմի կազմախտությանը: Հախուռն, համախապահի հուզականությանը պայմանավորված քաղաքական բանախոսությունը, քաղք չորին խառնելով, մթնոլորտում փրկված պարկերի անվարարության առանց այդ էլ հասարակության շերտը: Մինչդեռ այս ընկրությունների ամենամեծ, զգալի առաջընթացն ու ա-

ռանչնահատկությունը, մրցակցության ամբողջ ընթացքում քաղաքական ուժերի միջև համարյա բշմամության քաղաքայությունն էր:

**ՊԱՏԵՐԱԶՄ ԱՌԱՆՑ  
ԿՐԱԿՈՑՆԵՐԻ**

Տարածաշրջանում այս միջադեպը առաջին հայացքից աննշան լինելով՝ այդուհանդերձ, լրջորեն սրել է երկու հարեան ժողովուրդների հարաբերությունները: Խոսքը վրաց-ադրբեյջանական սահմանի վրա գրվող Դավիթ Գարեջի վանական համալիրի վեճի մասին է: Ազերի սահմանապահներն, առանց որևէ նախազգույսցման, հայտնվելով համալիրում՝ արգելել են վրացի հավատացյալների մուտքը վանական տարածք, ինչը դժգոհությունների ալիք է առաջացրել ողջ Վրաստանում: Վրաստանի փոխ-արտգործնախարար Նիկոլոզ Հաշիկաչեն հայտարարել է, որ քարտեզով վանական համալիրի 98 փոկոսը պարկանում է Վրաստանին, սակայն կան ինդրահարույց հայտնվածներ: Դժվար է պարկերացնել, թե ինչու է այդ 2 փոկոս ինդրահարույց հայտնվածների պարկանելիությունը ճշտելու համար սահմանապահ գործի անհրաժեշտությունը զգացվել: Հավանաբար լարվածության պարտնառն ավելի խորքային է, և համալիրի միջադեպը դրա դրսևորման հերթական առիթներից է, ինչը սակայն չի վրիպել երկու երկրների արտգործնախարարությունների ու անգամ նախագահների ուշադրությունից: Ու չնայած հայտարարվել է, որ ազերի սահմանապահներն ազարել են հա-

մալիրը, ըստ երևույթին, խնդիրը դեռ առկաիված է, բանի որ Վրաստանում բողոքի ակցիաները շարունակվում են: Թրիխյան բողոքի ցույցերին և երթերին հաջորդել է Վրաստանի տարբեր մասերից շուրջ 100 վանականի և հայրուրավոր հավատացյալների բողոքի ակցիան անմիջապես Դավիթ Գարեջիի համալիրում: Ազերիները, իրենց հին երգի հանգով, այս միջադեպն էլ են փորձել հայկական գործոնով պայմանավորել, կոչ անելով վրացիներին՝ չարվել հայերի սաղրանքին «չուրախացնել մեր բշմամիներին»: Մակայն վրացական մամուլը խնդրի առնչությամբ ոչ միայն չի անդրադարձել այդ անհերթություններ, այլև հիշեցրել է նաև Արցախի տարածքի եկեղեցիների նկատմամբ արդրեջանական հավակնությունների մասին:

Հայաստանի համար միջադեպը հետաքրքիր է այնքանով, որ մշակութային ժառանգության պարկանելիության շուրջ քանակցությունները տարածաշրջանային լուրջ խնդիրներից են: Թեկուզ հայաստանյան եկեղեցիների նախապարտի խնդիրը Վրաստանում: Հայկական մշակութային ժառանգության ինչքան արժեքներ են ոչնչացվում ազերիական տարածքներում: Մշակութային արժեքների պարկանելիության խնդիրը վաղուց հոգևոր միջավայրից տեղափոխվել է քաղաքական ոլորտ և ելնելով համաշխարհային գլոբալացման զարգացումներից՝ ենթադրվում է, որ հետագայում այն ավելի է կարևորվելու: Ուրիշի մշակութային ժառանգությունը յուրացնելու նկրությունները նորություն չեն մեր տարածաշրջանում: Այս հաշվով առաջադարձը Թուրքիան

ՆԱԿԱՎԱՐՏ ՀԱՐՏ

ՊԱՏԵՐԱԶՄ

ՆԱԿԱՎԱՐՏ ՀԱՐՏ

ՊԱՏԵՐԱԶՄ

է, սակայն ազերիների հավակնոթյունները ավելի ու ավելի ազդեցիկ դրսևորում են սրանում, ինչը պարահական չէ: Երբ բոլոր պարսությունները գրված են, դժվար է պարսություն արեղծելը, այն էլ վաղեմիության կնիքով, ինչի համար մշակութային վկայություններ են պետք: Նման միջավայրում մեր խնդիրն է հնարավոր միջոցներով փեր կանգնել մեր ժառանգությանը, եթե դժվար է դրսում, գոնե մեր փարածքում թույլ չգրա, որ դրանք ավերակվեն: Ելանքը ցույց է տալիս, որ ուրիշի մշակութային ժառանգության յուրացման փորձերը շարունակվելու են: Սա նույնպես պարտագն է ու չնայած առանց կրակոցների, քայց նույնքան վրանգավոր: Ու կարևոր է, որ այդ պայքարում մեր թիկունքում զգանք ոչ թե ավերակների, այլ մեր վերականգնված արժեքների առողջ շնչառությունը:

**«ԵՎՐԱՏԵՍԻԼ 2012-Ի»  
ՊԵՐՃԱՆՔՆ ՈՒ  
ԹԾՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

Բարվում ավարտվեց հերթական «Եվրատեսիլը», որին Հայաստանը մի շարք հայրենի և օրյակիսի պարսաններից էլնելով՝ հրածարվեց մասնակցել: Ազերիներն ամեն ինչ արել էին իրենց գովազդելու և Եվրոպային շացնելու համար: Իսկպես էլ, ամեն ինչ շացուցիչ էր արևելյան գունագեղությունը, շքեղ ու փայլուն, սակայն պիտի ենթադրել, որ ազերիների ջանքերը՝ աշխարհին ներկայանալ քաղաքակրթության հանդերձանքով, այնքան էլ չհաջողվեց, քանի որ

շախոհեցին ամենակարևորը՝ ոչ մի հնարքով չկարողացան արտաքին շքեղության փակ թաքցնել կեղտոտ փակաշորերը: Մինչ այդ Եվրատեսիլը քանաչև էր ընդունել, պահանջելով անհասպող դադարեցնել Ադրբեջանում խոսքի և ազատության սահմանափակումները, հավատարմով, որ «Եվրատեսիլի» անցկացումը պետք է հնարավորություն տա Ադրբեջանին՝ ապացուցելու, որ երկիրը չգտնում է ժողովրդավարության: Սակայն բռնությունները կարարվում էին հենց «Եվրատեսիլի» նախօրերին՝ հյուրերի աչքի առաջ, մեկ անգամ ևս ապացուցելով, որ ժողովրդավարություն կոչվածն Ադրբեջանում ընդամենը վերջերս քացահայտված խավարային դիվանագիտությունն է, որի շնորհիվ ազերիները վարահ են, որ կարող են ամեն ինչ իրենց ուզած գույնով ներկայացնել: Նավթադուրներն ու գազի վաճառքից սրացվող միջոցներն ավելի ու ավելի են գրգռում Ադրբեջանի ախորժակը՝ սրիպելով առավել ընդարձակել ազերիսիվ հավակնոթյունների ամպլիփոտը: Ըստ ուզմական փորձագետ Արծրուն Հովհաննիսյանի՝ այդ երկրի արտաքին քաղաքականության մեջ խնդիրները երբեք այդքան դրսևորված չեն եղել, ինչպես այսօր: Ըստ նրա՝ Ադրբեջանը ոչ թե խնդիրներ ունի, այլ հակամարտության մեջ է համարյա բոլոր հարևանների հետ և «...մեղքը Ադրբեջանինն է, քանի որ այդ երկիրն ինքն է արեղծել խնդիրներ, իսկ մարսիմալիստական չգրումները՝ մշտապես բնորոշ են արհեստական պետություններին»: Փորձագետը հավանական է համարում նաև պարտագնը ազերիների

ու թուրքմենստանի միջև. «Ադրբեջանի սնուցման աղբյուրը նավթն է, և քանի որ այդ աղբյուրը թուրքմենստանի հետ կիսելու խնդիր կա, սպա ինչքան էլ փորձ արվի բողարկել պրոբլեմը, այն կարող է լուրջ զարգացումներ ունենալ»: Որոշ վերասպահումներով առնակատումներ են հնարավոր Իրանի և Վրաստանի հետ: Տրամաբանությունը հուշում է, որ այս ամենի եզրակացությունը մեկն է. ազերիների աննախադեպ պատուզինման պարսառը ոչ միայն դարաքաղյան հակամարտությունն է, այլև առավել լայնածավալ ընդգրկումներ ունի: Պիտի ենթադրել, որ Հայաստանի հասցեին ազերիների ուզմապենչ հայտարարությունները գուզահեռ «մեխիցներ» են նաև հարևան երկրներին ու միածամանակ ազերիսիվ նկրտումները բողարկելու նպատակն ունեն, ավելի ճիշտ, դրանք համաշխարհային հանրության ուշադրությունը շեղելու համար են: Եվ վար է, որ համաշխարհային հանրությունը, ինչինչ շահեր հաշվի առնելով, իր գործը թեթևացնելու համար, հաճախ չնկատելու է տալիս իրեն շեղելու ջանքերը: Եվ դա պարահական չէ, քանի որ քաղաքական կրկնակի, եռակի սրանդարտները ուժի մեջ են այնպեղ, որպեղ նավթ ու գազ կա: Աշխարհի հզորները չեն էլ զիտակցում, որ իրենց շահամոլական, անարարքեր վարքով թույլ են տալիս նոր՝ «Ադրբեջան» որակումով շարտակ ուռուցքի գոյացումը քաղաքակրթության թուլացող օրգանիզմում: Այնպես որ, «Եվրատեսիլի» ազերիական հրավառությունները որքան էլ շքեղ, վերջին հաշվով, ի վիճակի չեն ներկա իշաանության հիվանդությունը բողարկել:

**ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ Է  
ՀԱՅԵՐԻ  
ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Միջպետական հարաբերություններում քաղաքական ցինիզմն ու դրանով պայմանավորված գործողությունների լիպիությունը խորացող հիվանդության առաջին վկայություններից են, և եթե խոսքը պետության մասին է, սպա միջազգային ուժերի կողմից անհրաժեշտ պրոֆիլակտիկայի չկրատման պարագայում մարդարանական ճգնաժամն անխուսափելի է: Օրինակը ազերիների վերջին սաղրանքներն են: Միայն հունիսի առաջին շաբաթվա ընթացքում Ադրբեջանի հետ սահմանափակ հայտական շրջաններում կասեցվել է մի քանի դիվերսիոն գործողություն, ինչից հետո մարտեր են սկսվել նաև Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի զինված ուժերի շիման գծում: Չոհեր և վիրավորներ են եղել երկու կողմերում էլ: Եվ դա այն օրերին, երբ փարածաշրջանային այցի շրջանակում Հայաստանում էր ԱՄՆ-ի պետարտուղարն, ու Մոսկվայում փեղի էր ունենում հայ և ազերի մրավորականների հանդիպումը: Քաղաքագետներն ու ուզմական փորձագետներն արդեն վերլուծել, փորձել են գրանել ազերիների նման պահվածքի դրդապարսաններն ու քաղաքական նպատակները, և բոլոր եզրահանգումներում կարմիր թելի պես է անցել շանփածի գործոնը, որի օգնությամբ Ադրբեջանը առաջին անգամը չէ, որ փորքում է իր պայմանները թելադրել համաշխարհային հանրությանը: Վաշինգտոնն ու Փարիզը գրեթե միածամանակ հանդես եկան լարվածու-



թյան սրունք դադարեցնելու կոչերով, որոնց ավելի ուշ միացավ նաև Ռուսաստանը: Իսկ Վաշինգտոնի Վուդրո Վիլսոնի կենտրոնում հրավիրված ասուլիսում Արևմուտքի առաջադասար կոնֆիդերատիվների եզրահանգումը միանշանակ էր. միջազգային հանրությունը պետք է անհասպաղ միջամտի՝ չսպասելով նույնիսկ հունիսի 18-ին Փարիզում Հայաստանի ու Ադրբեջանի արագործնախարարների հանդիպմանը: Ըստի որ, ինչպես նշում է միջազգային ճգնաժամային խմբի նվիրակական ծրագրերի տնօրեն Մաքիմա Ֆրեյզերը. «Իրական վրանգ կա, որ հակամարտությունը դուրս կգա հսկողությունից, և կողմերը կսկսեն վրեժ լուծել ամեն կորստի համար»: Որ ազդերիները ավելի ու ավելի ազդեալի և անկանխարեսելի են իրենց դրսևորումներում, նորությունն չէ: Թերևս Ադրբեջանը հազվագյուտ այն երկրներից է, որ հավակնություններ ունի համարյա իր բոլոր հարեանների նկատմամբ, քաջառությանը, իհարկե, Թուրքիայի: Այս ժողովուրդը դատարարված է չեղած տեղից դարերի երկարությանը պատմություն սրեղծելու, որի համար ստիպված է 21-րդ դարում առաջնորդվել նախնադարի բնազդներով և շարունակաբար իր ներսում լիցքավորել քոչվորի, մարդակերի ու զավթիչի գեներ: Մրսածել, որ ինքնաբնադատության զրո մակարդակի վրա հայտնված ադրբեջանական իշխանությունը կարող է սքափվել ու ապագայում ողջամարտության ուղին ընկրել, համարյա ֆանտաստիկայի ժանրից է, այնպես որ, հույս չկա, թե սադրանքները չեն շարունակվելու: Ադրբեջանի երկկենցաղ քաղաքականու-

թյունը, երբ բանակցություններում գտն է, իսկ իր երկրում գորշ գայթույլ չի տալիս հուսալ, որ այս ժողովուրդը զոնե մոտ ապագայում կկարողանա սերտել քարոյականության ու քարեկրթության այրուրենը: Այս երկրի ներկա իշխանությունը հավանաբար ի գորու չէ գիտակցելու, որ իր քաղաքական հավակնուր երազանքներն իրականացնելու համար շարք է ուշացել, որ ազերիներն ընդհանրապես ուշացել են մարդկության երթից և հիմա համաշխարհային քաղաքակրթության երևապատի դերի համար էլ պետք է գոհ լինեն: Իսկ գուցե և գիտակցում են ու իրենց նվազ ուժերով, գազի և նավթադուրանների փայլից շլացած՝ փորքում են ամեն ինչ գլխիվայր շրջելով, երևապատի դիրքից միանգամից առաջնապատի գոտում հայտնվել... Ազերիների խառնաշփոթ ուղեղում ամեն ինչ հնարավոր է, միայն թե ուժից վեր, գերնպատակներով ծանրաբեռնվելը կարող է կաթվածի հասցնել: Վարն այն է, որ հարեաններ լինելով՝ այդ ամենի հեղեղները զգալի են նաև Հայաստանում: Ազերիներն իրենց գործողություններով փորքում էին միաժամանակ խուճապի, տազանապի ու վախի մթնոլորտ սրեղծել Հայաստանում, մոռանալով ամենակարևորը՝ համազգային վրանգի ժամանակ հայերի միավորվելու ժառանգական հարկությունը: Թվում էր՝ հեղեղաբանական ներքաղաքական տարաշարունակները առանչին խմբերի են բաժանել ժողովրդին, սակայն այդ օրերին մեք ժողովուրդը ցույց տվեց, որ պատրաստ է կանգնելու հայ գեղվորի կողքին՝ պաշտպանելու հայրերի սահմանները:

### ՄՁԿԻԹԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՏՈՒՆ

Բաթումիում նոր կառուցվող մզկիթի դեմ բողոքի ցույցերը ժողովրդագրական աղետի առաջին ազդանշաններն են, չնայած մզկիթի կառուցման պայմանավորվածությունը չեղք էր բերվել երկու պետությունների՝ Թուրքիայի և Վրաստանի մշակույթի նախարարների հանդիպման ընթացքում: Թերևս հենց այդ հանգամանքով պիտի բացատրել, որ վրացական իշխանությունները փորքեցին երևույթը չսրելու համար քողարկել խորքային պարմառները, հաշվի չառնելով ամենատեղականը, որ դիվանագիտության մեջ ժամանակավոր լուծումները միշտ էլ հանգեցնում են անկանխարեսելի զարգացումների, սպառնալով անգամ երկրի, տվյալ դեպքում Աջարիայի Ինքնավար Հանրապետության անվտանգությանը: Աջարների բողոքը պայմանավորված էր ոչ թե եզակի, զուտ մի մզկիթի կառուցմամբ, այլ համաևուն և համարովանակ երևույթների շրջալույս, քանի որ, ինչպես գրում է vz.ru պարբերականը, վերջին տարիներին վրացական անցնազիր է ստացել Աջարիայում բնակվող արդեն 25.000 բուրք: Փորչագեղների կարծիքով՝ հարավային հարեանների ազդեցությունն Աջարիայում չափից շարք է: Թուրքերն այստեղ կառուցում են ամեն ինչ՝ մզկիթից մինչև հասարակաց տուն: Բողոքի երթերի կազմակերպիչները նշում են, որ ինքնավարությունում արդեն 180 մզկիթ է գործում: Բանն այն է, որ

ըստ վրացական գործող օրենսդրության, երկրադարացի բուրքերն իրավունք ունեն մասնակցելու ընկրություններին, որն ավելի է սրում իրավիճակը, քանի որ, բավական է մի բուրք չորան հայտնվի, որպեսզի մի քանի տարում նրա շուրջը համայնք չեկավորվի: 25 հազար բուրքի առկայությունը ենթադրում է, որ մի քանի տարի անց նրանց թիվը կարող է կրկնապատկվել և նույնիսկ եռապատկվել, մասնավորապես հայերիս ծանոթ է որևէ տեղանքում բուրքերի արագ բազմանալու մեխանիզմը, որից հետո սկսվում է ավելի հեռախար նպատակների ծրագրավորումը: Ինչպես նշում է Վրաստանի խորհրդարանի պարզամասվոր Ջոնդի Բագարուրիան, Թուրքիայի ծայրահեղ ուժերը վաղուց են հայտարարում, իրք Աջարիան բուրքական տարածք է, որը Վրաստանի կողմից գրավվել է 100 տարի առաջ: «Այդ ծայրահեղ ուժերը կարող են ընկրությունների միջոցով իշխանության գալ Թուրքիայում, ինչից հետո կկրկնվի այն, ինչ տեղի ունեցավ Արևազիայում ու Հարավային Օսիայում», - ասում է Բագարուրիան, սպա շարունակում. «Այստեղ ողջ արտադրությունն անցել է բուրքերի շեղքը: Մեկ օրինակ՝ Բաթումիում կար հրաշալի գրադարան: Իմ տվյալներով՝ այն գնել են բուրքերն ու վերածել խաղատան»: Եվ անհավանական չի թվում, որ մի գեղեցիկ օր էլ Թուրքիան, իր քաղաքացիներին պաշտպանելու նպատակով, ներխուժի Աջարիայի Ինքնավար Հանրապետություն: Կիպրոսի պատմությունը

ասվածի լավագույն օրինակն է: Անեն ինչ հնարավոր է, քանի դեռ թուրքերը նույնիսկ երագում շարունակում են լիցքավորել մեծ թուրանի իրենց ցեղաբանությունը: Հնարավոր է՝ նույն վրանգը սպառնա նաև հայաբնակ Ջավախքին: Կարա-Թրիլիսի-Բարու երկաթգիծը դրա առաջին ազդանշաններից է: Չի բացառվում, որ երկաթգծի սպասարկումը ամբողջովին հանձնվի թուրքերին, և այս դեպքում կգործի թուրքերի արագ բազմացման մեծ ծանոթ մեխանիզմը: Բանն այն է, որ այս հարցում պաշտոնական Թրիլիսիի, առայժմ չեզոք, դիրքորոշումն ավելի է սրում վրանգի գագաթնությունը: Այնպես որ, Ջավախքի մեր հայրենակիցները հնարավորինս աշխուրջ պիտի հեղեղեն աջարական զարգացումներին, քանի որ, ինչպես փաստերն են վկայում, վրացական իշխանությունները կան չեն փեսնում, կան չտեսնելու են փալիս երկրի ժողովրդագրությանը սպառնացող վրանգը: Արդեն այսօր Կրասնավանում ներդրումների 70 տոկոսը թուրքերի չեռքում է: Մասկաշվիլին երագում է երկնաքերներ կառուցել Բաթումիում... Ո՞ւմ հաշվին և ովքե՞ր են այդ երկնաքերներում բնակվելու: Այս հարցերի պատասխանը ամենաշարք բերևս պիտի Հայաստանին մտահոգի, որովհետև Թուրքիայից և Ադրբեջանից հետո անտանիլի է սահմանակցել նաև թուրքական երրորդ իրականությանը և կղզու պես չորս կողմից շրջապատված լինել մահմեդականներով:

«ԵՐԿԻՐ ՄԻՐԻԱ,  
ՀԱՉՈՐԴ ԵՐԿԻՐԸ...»

«Միրիայի բարեկամների» փառիզյան երրորդ հավաքին արդեն 107 երկրների ներկայացուցիչներ էին մասնակցում, նախկին 74 և 83-ի փոխարեն, շար խնդիրների հետ պահանջելով ՄԱԿ-ից չբացառել նաև Միրիայի դեմ ռազմական ուժի կիրառումը: Խնդրի ռազմական հանգուցալուծմանը դեմ են և հավաքին չէին մասնակցում Ռուսաստանն ու Չեկոսլովակիան, որի համար մասնակիցները կոչ են արել ճնշում գործադրել Մոսկվայի և Պեկինի վրա, միաժամանակ հայտարարելով, որ դրա համար նրանք պատասխան պիտի տան: Նման անհարգալից վերաբերմունքը այնպիսի երկրների նկատմամբ, ինչպիսիք են Չինաստանն ու Ռուսաստանը, այլ բան չէ, եթե ոչ Արևմուտքի և մի շարք այլ երկրների կողմից «Արաբական գարուն»-ի գործողությունների ընթացքն իրենց ցանկալի շարժում ներկայացնելու չգտնում, ընթացք, ինչը համարյա նույն սցենարով իրականացվում է արաբեր երկրներում և հավանականն այն է, որ Միրիան այդ շղթայի վերջին օղակը չէ: Առավել ուշադիր վերլուծության դեպքում դժվար չէ հասկանալ, որ այս փակցիկան Արևմուտքի՝ ժողովրդավարության անվան փակ քողարկված, նոր ռազմավարությունն է, որի շնորհիվ Արևմուտքը որևէ երկրում իր ազդեցության հաստատումը իրականացնում է ոչ թե նախկին արարքին անմիջական միջամտության

ՌԵՏՈՒ ԴՐՈՒՄ

ՇՄՆ ԴՈՒՄԵՐ

շնորհիվ, ինչպես Իրաքում էր, այլ այդ երկրի իշխանությանը ընդդիմադիրներին ուժերի միջոցով: Մեխանիզմը պարզ է և համարյա անվրայ: Հաշվի առնելով այդ երկրներում բռնապետությունների արդյունքում կուրակված փարիսների դժգոհությունը, դժվար չէ հեղափոխական զաղափարների ներարկմամբ փողոց հանել ժողովրդական զանգվածներին: Մնացածը փոխանակալի գործ է, այլապես փարսիական է, որ պետության ներսում ինչ-որ ուժեր կարողանում են օրերով, հաճախ նաև ամիսներ, հավասար պայքար մղել երկրի զինված ուժերի դեմ: Դժվար է հավատար, թե որևէ պետություն ինքնակամ թույլ կտար իր ներսում ռազմական նման միավորումների գոյությունը: Պետությունը թույլ չի փալիս, իսկ ահա նոր ռազմավարության կարևոր կետերից մեկն էլ ընդդիմադիրներին զինելն ու ամեն ինչով աջակցելն է: Փարիզում էլ դիվանագետները պայմանավորվել են նաև «լրջորեն ավելացնել ասպարանների օգնության ծավալները»: Նման զինված առնակապումների պարագայում, բնականաբար, գոհերն անխուսափելի են ոչ միայն հա-

ՌԵՏՈՒ ԴՐՈՒՄ

կամարպող կողմերի, այլև խաղաղ բնակչության շրջանում: Եվ սկսվում է երկրորդ՝ տեղեկատվական հիարեթիայի փուլը, որի հիմնական կոմանդ մարդկային զոհերն են: Այս փուլում կարևորը աշխարհի հանրությանը այդ երկրի իշխանության դաժանությունն ու անմարդկայնությունը խոշորացույցի փակ ներկայացնելն է, որպեսզի հասունանա երրորդ՝ արարքին ռազմական միջամտության փուլը: Եվ ահա բռնապետը փապաված է, համապետական ընկրություններով իշխանության են գալիս «ժողովրդավար» ուժերը, սակայն բուն ժողովրդի կյանքը կարծես թե չի փոխվում, կրկին ու կրկին փողոց հանելով դժգոհ զանգվածին: Սակայն այդ բողոքն այլևս հետաքրքիր ու կարևոր չէ, կարևորը Արևմուտքին հաճո իշխանության գոյությունն է և այն, որ այդ կառավարելի ու ցանկալի իշխանությունը չեւավորվել է հանուն ժողովրդավարության և ազատության համար ժողովրդի մղած պայքարի արդյունքում: Մնացալը մեկրոյի վազոնավարի հայտարարության պես է. «Երկիր Միրիա, հաջորդ երկիրը...»:

# ԿԱ՛Մ ՂԱՐԱԲԱՂ, ԿԱ՛Մ ՄԱՀ

## ԿՈՎԿԱՍՆ ԱՅՍՕՐ. Զննարկում Վաշինգտոնի Վուդրո Վիլսոն կենտրոնում

**«Ադրբեջանի և Հայաստանի երկրասար-  
դությունը դաստիարակվում է թշնամական  
լուծունգներով»- գրնում են ամերիկացի  
փորձագետները:**

Կոնֆլիկտի մեջ գտնվող երկու երկրներում էլ՝ Ադրբեջանում և Հայաստանում, կառավարությունները կազմավորել են միմյանց նկատմամբ թշնամական գաղափարներ, որոնցով դաստիարակվել են երկրասարդների մի շարք սերունդներ, որոնք պարասար են գոհաբերել իրենց և ուրիշների կյանքը: Միջազգային հասարակությունը պետք է արմատապես փոխի իր ռազմավարությունը, միջնորդության փորձերից անցնելով հեղեղողական վերահսկողության, որպեսզի կանխի նոր պատերազմը, որը վարածքային և քաղաքական առումներով մեծապես դուրս կգա դարաբաշյան հիմնախնդրի սահմաններից: Այս եզրահանգմանն են եկել եվրասիական հեղափոխություններում մասնագիտացած ամերիկացի վերլուծաբանները, որոնք ելույթ են ունե-

ցել երեքշաբթի օրը՝ հունիսի 5-ին, վաշինգտոնյան Վուդրո Վիլսոն կենտրոնում (Woodrow Wilson Center): Ելույթ ունեցողները նաև երկու հանգամանք են նշել, որոնց համարեքարում էլ ընթացել է քննարկումը: ԱՄՆ պետքարությունը Հիլարի Բլինթոնի այցը վարածաշրջան, ինչը ցույց էր տալիս ԱՄՆ-ի ուշադրությունը Կովկասում տիրող իրավիճակի հանդեպ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շրջանում զինված բախումների և երկկողմանի զոհերի մասին հաղորդագրությունները:

**Պատերազմն «անխուսափելի է և անկասելի»**

Արտաքին քաղաքականության ամերիկյան խորհրդի աշխատակից

Ուեյն Մերրին իր ելույթը կենտրոնացրեց Հայաստանի և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող կոնֆլիկտի նկատմամբ ԱՄՆ-ի հեղափոխությունը պայմանավորող նախադրյալների և հանգամանքների վերլուծության վրա: Ընդ որում, նա վերապահություն արեց նշելով, որ այդ վարածաշրջանը չի դասվում Ամերիկայի գեոպոլիտիկական/աշխարհաքաղաքական/առաջնությունների թվին:

Մերրին երկու հանգամանք նշեց, որոնք, ինչպես ինքն է ենթադրում, պետք է համոզեն ԱՄՆ-ին, որ անհրաժեշտ է առավել լարված ուշադրությամբ հետևել կովկասյան վարածաշրջանին: «Նախևառաջ, վրաստանում օգուտուսին տեղի ունեցած փորձիկ պատերազմը ցույց տվեց, թե որքան վտանգավոր է Կովկասում գոյություն ունեցող կոնֆլիկտների գեոպոլիտիկական ներուժը և թե ինչու չի կարելի թերազնահարել դրանք: Երկրորդ, եթե մինչ այժմ Լեռնային Ղարաբաղում իրավիճակը զնախարկում էր որպես հեղափոխականական, ապա այժմ այն վերածվել է նախապատերազմականի», - ասաց վերլուծաբանը, ընդգծելով, որ իր եզրակացությունները հիմնված են վերջերս վարածաշրջան կատարած այցի ընթացքում արված հեղափոխությունների վրա:

Արտաքին քաղաքականության ամերիկյան խորհրդի փորձագետը պատմել է, որ երկու կողմերի սպասումները գործողությունների երկարաժամանակ պատճառներից են: «Չարմանալի է, որ երկու կողմերն էլ պատերազմը դիտարկում են ոչ թե որպես պարզապես անխուսափելի, այլ ինչ-որ չափով նաև որպես սցենարի զարգացման դրական վարքերակ»:

Մերրին գրնում է, որ «Միևսի

խանի ժամանակն անցել է»: «Դաստիարակված այն բանից, թե ես ինչ տեսա այնտեղ, կարող եմ նույնիսկ ասել, որ պատերազմն անխուսափելի է և անկասելի: Այն կանխելու համար այլ տեսլի դիվանագիտական ջանքեր են անհրաժեշտ»:

Կոնֆլիկտի կողմերից յուրաքանչյուրի վարածաշրջանային «հովանավորները»՝ Ռուսաստանը Հայաստանի դեպքում, իսկ Թուրքիան՝ Ադրբեջանի, Վիլսոն Մերրիի կարծիքով, խուսափում են կոնֆլիկտին ուղղակիորեն մասնակցելուց, սակայն շարունակելու են լինել կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերի վրա ունեցած ազդեցության կարևորագույն գործոնները, նպատակ հեղափոխելով օգուտը քաղել պատերազմի ընթացքից:

Մերրին հեղափոխել է, թե ինչու ԱՄՆ իրեն ավելի ակտիվ չի դրսևորում կովկասյան վարածաշրջանում: Նա առավել համարահայտ մի «ոացիոնալ» քաղաքականություն է տալիս. Կոնգրեսի երկու պալատներն էլ «չափից ավելի շատ են կենտրոնացել ներքին քաղաքական պայքարի վրա, որպեսզի բավականաչափ ուշադրություն դարձնեն արտաքին քաղաքականությանը»:

Մերրին կանխատեսում է, որ Լեռնային Ղարաբաղի դեպքում ոացիոնալության տեսությունը կարող է շարկատակ դառնալ, քանի որ «երբ պատերազմը սկսվի, այն այնքան ինտենսիվ և դաժան կլինի /դատելով կողմերի ռազմականացումից/, քաղաքացիական հասարակության շարքերում զոհերն այնքան զանգվածային, իսկ միջնորդավորված մասնակիցների շրջանակն այնքան մեծ», որ ոչ ամերիկացի քաղաքագետներին, ոչ միջազգային հանրությանը չի հաջողվի անտեսել իրավիճակը: Նրա

կարծիրով Լեոնային Ղարաբաղի հիմնահարցը չի կարելի համեմատել վրաց-օսեթական հիմնախնդրի հետ. դասերով բոլոր նախանշաններից և ողջ ներուժից, այն առավել մոտ է Մերչավոր Արևելքի հիմնախնդրին:

«Նման պատերազմը կանգնեցնելը շատ ավելի դժվար կլինի, քան այն կանխարգելելը»,- եզրափակում է վերլուծաբանը:

«Համաշխարհային տերությունների, այդ թվում նաև ԱՄՆ-ի համար, պատերազմի կանխարգելման ավելի արդյունավետ ռազմավարություն կարող էր դառնալ այն, որ նրանք դադարեցնեին միջնորդների դերում հանդես գալու փորձերը և սկսեին մրցավարների դերում գործել»,- խորհուրդ է փայխա Մերթին:

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՏՐՉԱՆԱՅԻՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ «ՀԱՅՐՆ ՈՒ ՄԱՅՐԸ»**

«Լեոնային Ղարաբաղի հիմնախնդիրը՝ ժամանակակից Եվրասիայում էթնո-տարածաշրջանային ամենավաղեմի կոնֆլիկտներից մեկը, «ներկայիս կոնֆլիկտների հայրն ու մայրը», որը ծայր է առել բալկանյան, մերձբալթյան և այլ հիմնահարցերից առաջ, դեռ մնում է չլուծված: Ավելին, իրավիճակը գնալով վատթարանում է և ոչ թե բարելավվում, խաղաղ գործընթացը ստեղծված է, իսկ ստեղծված վակուումը միայն վատ նորություններով է համալրվում,- նշել է Համաշխարհային խաղաղության Կարենգի ֆունդի վերլուծաբան Թոմ դե Վասլը:

Փորձագետը նշել է կիշե դարձած հիմնական մոլորությունները կապված Լեոնային Ղարաբաղի իրադրության հետ:

Առաջին միջն այն է, որ Հարավային Կովկասը գեոպոլիտիկական տեսանկյունից դիտվում է որպես շահմասրի խաղաղախախտ, որի վրա գերտերությունները պետք է ընդհանրապես բոլոր խնդիրները լուծելու ճիշտ հնարքներ խաղարկեն:

«Գորքայովից մինչև Ժակ Օրակի և Դմիտրի Մեդվեդևի կառավարած գերտերությունների փորձերը կողմերին խաղաղ համաչալնության քերելու ուղղությամբ փաստացիորեն ոչ մի լուրջ արդյունքի չհանգեցրին»,- ասել է դե Վասլը:

Նա համոզված է, որ Կովկասի կոնֆլիկտներում վճռական դեր է խաղում մասնակից կողմերի կամքը:

Դե Վասլը գտնում է, որ այն համոզմունքը, որ կոնֆլիկտի էությունը որոշակի տարածաշրջանի ինքնիշխանության չգրման մեջ է, երկրորդ մոլորությունն է: Նրա կարծիքով Լեոնային Ղարաբաղի հիմնախնդիրը շատ ավելի խորքային է, իսկ դրա էությունը ռազմադարյան պատմություն ունեցող հայերի և ադրբեջանցիների ինքնաճանաչման տարբեր շեղի մեջ է: Դե Վասլը համարում է, որ ինքնագիտակցության մեջ առկա տարբերություններն էին, որ քաղաքական նախադրյալների հետ մեկտեղ ի սկզբանե քերեցին երկու երկրների միջև պատերազմի բռնկման: Անկախության չեղարկումը միայն ամրապնդեց ինքնագիտակցությունը, և այժմ Լեոնային Ղարաբաղի հարցում որևէ փոխզիջում անելը հայերն ու ադրբեջանցիները հասկանում են որպես ազգային արժանապատվության ստորացում: Ազգային ինքնա-

ԲԱՍՏԱՆՈՒՄ

գիտակցության այս գաղափարը, ըստ Կարենգի ֆունդի փորձագետի, երկու երկրների կառավարությունների կողմից էլ կիրառվում է որպես հասարակական կարծիք չեավորելու գործիք:

«Ղարաբաղյան հիմնահարցը որպես ստեղծված հարց բնութագրելը երրորդ լուրջ մոլորությունն է»,- ասել է դե Վասլը՝ իրավիճակի վերլուծության ժամանակ:

«Պարբերաբար մարդիկ են գոհվում այս խնդիրը ստեղծված անվանելը ոչ միայն սխալ է, այլ նաև վրանգավոր, քանի որ այն խանգարում է ճիշտ ախտորոշմանը, հետևաբար նաև հարցի խաղաղ կարգավորման համար ճիշտ ռազմավարություն մշակելուն»,- նշել է նա:

Վերլուծաբանն ընդգծել է, որ հիմնախնդիրը շատ շարժուն է, և կողմերը մշտապես գրավում են կրակի գծում ընդ որում, միջազգային դիպլոմատիայի ատկայությունն այսպեղ անվազագույնի է հասցված:

Թոմ դե Վասլը ընդունում է, որ չնայած բանական բոլոր կանխատեսումներին, կոնֆլիկտային տարածաշրջանում առկա է ռազմականացման իրական սպառնալիք, և վակուումի չգոգումը վանում է դեպի պատերազմական բախման սպառնալիքի ավելի մեծացման:

«Ադրբեջանի և Հայաստանի բանակների ծախսերի անհամաչափությունը, այն դեպքում, երբ Ադրբեջանի պաշտպանության նախարարության բյուջեն գերազանցում է Հայաստանի ողջ պետական բյուջեն, գործողությունների աստիճանական զարգացմանը նպաստող լրացուցիչ մի գործոն է»,- գտնում է դե Վասլը:

Թոմ դե Վասլը հիշեցնում է, որ խնդրի «էիզակնք լուծումը» արդեն

ԳՃԻՂ ԳՆԻՊԻՑԵՐ

երկար փարիներ գոյություն ունի, այն է՝ մի կողմ թողնել ինքնիշխանության հարցը և սկսել առավել կենսական խնդիրների լուծումը, ինչպես օրինակ՝ փախստականների հարցը:

«Բայց կարծես թե կողմերը չեն դրսևորում քաղաքական կամք այդ ծրագիրը իրականացնելու համար»,- ավելացրել է վերլուծաբանը:

Դե Վասլը ընդգծել է, որ խաղաղ գործընթացին խոչընդոտում է նաև այն փաստը, որ արտաքին միջնորդներին դիմելիս, ինչպես օրինակ ԱՄՆ-ին, ՆԱՏՕ-ին, ԵՄ-յանը կամ Ռուսաստանին, կողմերից յուրաքանչյուրը ցանկանում է, որ այդ աջակցությունը քիչ միայն իր շահերից, և պատրաստ չէ փոխզիջման:

**Խաղասեղանին դրված են Երևանի և Բաքվի հարաբերությունները**

Ջորջթաունի համալսարանի պրոֆեսոր Չարլզ Քինգը իր ելույթը սկսեց պատմելով, թե ինչպես մի քանի փարի առաջ նա Բաքվում էր գրավում՝ երկրասարդների մի խմբում, որոնք շարունակ կրկնում էին միևնույն արտահայտությունը. «Կամ Ղարաբաղ, կամ մահ. այլ ելք չկա»: Այս արտահայտությունը ադրբեջանական ամենահայտնի հիփ-հոփ խմբի երգից է:

«Երկու երկրներում էլ թե Հայաստանում, թե Ադրբեջանում, երկրասարդների ողջ սերունդներ են մեծացել, որոնք դաստիարակվել են նմանատիպ կարգախոսներով»,- նշել է Չարլզ Քինգը:

«Այդ կարգախոսները տարբերվում են նրանցից, որոնցից սկսվեց Լեոնային Ղարաբաղի պատերազմը: Այս նոր կարգախոսները դիտավորյալ ստեղծվել և հասարակական գի-

ԲԱՍՏԱՆՈՒՄ



ՀՊՎԳԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

# «ՄԵԾ ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԲ» ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՄԵԾ ՆԱԽԱԳԻԾԸ»

սուրբանները իրականացրել են բնիկների ոչնչացման ծրագիր, ինչի արդյունքում թուծվել է նաև նոր ժողովուրդ: Ընդվոր ու վայրենի, ոչխարի հոգի երկից ակամա գնացողը այսօր փողկապավոր է, փոխված զանգով ու դեմքով, բայց ոչ մի անօրոգությանը, որովհետև, ինչպես իմ համարեղ նախնիներն են սահմանել՝ թուրքը մնում է թուրք:

Միայն այսպես տեր դառնալով նոր վարձակալներ, որով նվաճվածը սրով պաշտպանելու քաղաքականությունը Թուրքիան դարձնում է դուրազորոտ ու հաշվեհարկ, վախկոտ ու համարձակ, որովհետև առջևում և միտհորիզոնում անընդհատ կենդանի է վարձակ կորցնելու վրանգը, այն բաժան-բաժան անելու մահացու միտհորությունը: Այսպես էլ Թուրքիային անպայմանորեն կանգնում է այդ երևույթի հակառակ կողմում, վերածվելով կամակապարի ու խամաճիկի: Թուրքիայի համար նշանակություն չունի քրիստոնյա է ոչնչացնում, թե մահմեդական, կարևորը իրականը կարարելն է, դրանից շահ ստանալը:

Առաջին աշխարհամարտի փորձերին, ընդհուպ մինչև 1925թ. Թուրքիան իրականացրեց մարդկու-

րականության մեջ են մտնում Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների կողմից, որպեսզի մարդկանց հասկացողության մեջ չեւափոխեն այն, թե ինչն է իրականում խաղաղասերները դրված: Իսկ խաղաղասերներն պարզապես փոքրիկ մի Ղարաբաղի ինքնիշխանության հարցը չէ միայն, այլ նաև Երևանի և Բաքվի փոխհարաբերությունները»,- ասել է Քինգը:

Փորձագետը նշել է, որ եթե լուրջ ընդունենք այն հավանականությունը, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև լարված հարաբերությունները կարող են վերածվել պայտերազմի, այդ դեպքում պետք է ուշադրություն դարձնել նրան, թե ինչպես է երկու երկրների կողմից օգտագործվում գոհի ռազմավարությունը: Մարդկանց գիտակցության մեջ գոհերի և հաղթողների ընկալումը մեծապես փարբերվում է նրանից, ինչ կար քան պարի առաջ, օրինակ Ադրբեջանը ակտիվ կերպով օգտագործում է «օկուպացված տարածաշրջան» տերմինը: Նրա կարծիքով երկու կողմերն էլ փորձում են ամերիկյան հասարակության և քաղաքական շրջանակների համակրանքն ու աջակցությունը շահել, օգտագործելով միևնույն զաղասիրը՝ այն, որ իրենք ցեղասպանության գոհեր են:

Չոհի տերմինը այլևս արտասովոր չէ հայկական կողմի համար, իսկ 2012թ.-ից արդեն Ադրբեջանն էլ է ակտիվորեն կիրառում այդ գործիքը միջազգային ասպարեզում, ինչպես նաև երկրի ներքում պրոպագանդելու համար:

«Ես կասեի, որ կոնֆլիկտի երեք մասնակիցներն էլ՝ Ադրբեջանը, Հա-

յաստանն ու Լեռնային Ղարաբաղը, արդեն լայնամասշտաբ քարոզարշավ են սկսել ցեղասպանության նախնական համար, և այդ արշավներում կողմերից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես գոհ, իսկ հակառակ կողմը որպես օկուպանտ և հաղթող»,- ընդգծել է պրոֆեսոր Քինգը:

Նա նշել է նաև ադրբեջանցիների և հայերի միջև մեծացող օգտարությունը: Նա նաև համաձայնում է Թոմ դե Վասիի հետ ասելով, որ կոնֆլիկտը ստեղծված համարելը լուրջ սխալ է:

Չարլզ Քինգի կարծիքով, չնայած որոշ հաջողությունների, «այն հույսերը, որ Միսկի գործընթացը կրերի որևէ համաձայնության և կողմերի համարարեցման, արդեն անհետացել են»:

Նա նշել է, որ «վրաց-օսեթական սահմանը խամրում է ադրբեջանական-հայկական-դարաբաղյան սահմանին տեղի ունեցող քախումների և գոհերի քանակի համապետրում»:

«Այժմ մենք ոչ թե պետք է խոսենք առաջացած հիմնախնդրի հետևանքների վերացման մասին, այլ նախագոուշացնենք երկու ինքնիշխան պետությունների միջև նոր լիամասշտաբ պայտերազմի հավանականության մասին», - հայտարարել է Քինգը:

Չարլզ Քինգը եզրափակել է ասելով, որ միջազգային հանրությունը այս փուլում պետք է ցանքեր գործադրի համոզելու երկու կողմերին, որ պայտերազմը վերսկսելը չեղարկու չէ իրենցից և ոչ մեկին, և մասնավորապես Ադրբեջանին և Հայաստանին պետք է ներկայացնի քաղաքական, տնտեսական, սոցիալական կոռուպտների և ռիսկերի հաշվարկ:

ԳՄԻՂ ԳՄԻՂԻՑԻՂ

ԲՆՆԱՐԿՈՒՄ

ԳՄԻՂ ԳՄԻՂԻՑԻՂ

թյան դեմ ոճիր, հայրենագրելով ու ոչնչացնելով 3 միլիոնից ավել հայերի: Աշխարհը Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի բերանով դեռևս 1914թ. հայտարարեց, որ այդ ոճիրը անպարտ չի մնա: Սակայն սկսված բոլշևիկյան խժոժությունները, նոր կայսրության չեղումը, Թուրքիան բաժան-բաժան անելու մեծերի ծրագրերը խաչաչեղեցին և սրեղծվեց մի վիճակ, երբ ամեն ինչ մոռացած մարդասեր ու ժողովրդավար երկրները ԱՄՆ գլխավորությամբ ներգրավվեցին Թուրքիան կլանելու պայքարին, բոլշևիկյան կարմիր հրեշը Մերջավոր Արևելք արտահանելու դեմ պայքանել սրեղծելու պայքարին:

Թուրքիան, կործանված այդ երկիրը, օգտվեց հակառակորդների հակասություններից ու ուրբի կանգնեց, վերածվելով հակառուսական, հակակոմունիստական պայքարի:

Մեծերը նրան ֆինանսավորեցին, զինեցին ու ներդրեցին պահակ երկիրը դարձավ միջազգային քաղաքականությանը նպաստող և ազդող գործոն, ինչի արդյունքում մշակվեց, ավելի ճիշտ է կենդանացվեց Օսմանյան կայսրությունը վերականգնելու գաղափարը, որը դրվեց Թուրքիային արտաքին քաղաքականության հիմքում, բայց գաղափարության չեղանկով:

Օսմանականների փոփոխությունը, որ կայսրվեց երկրորդ աշխարհամարտից հետո, պայմաններ սրեղծեց յաթաղանից փրկված ժողովուրդների զարթոնքի համար: Հույները, ասորիները, հայերը, քրդերը անդով պայքարի մեջ մտան զավթիչ արյունարբու երկրի դեմ և կարծես միաջազգային հանրությունը հասկացավ, որ մերժել կամ մոռանալ Թուրքիայի ոճիրները հնարավոր չէ և բարձրացվեցին ցեղասպանությունների փակ գորոցները:

Այսպես հայոց ցեղասպանությունը, հայ դարի ու պահանջարկի

րության խնդիրները դարձան Թուրքիայի գլխին կախված մահացու հարվածներ: Այդ իրավիճակը երկար կշարունակվի ու շահողը այսպեղ հայկական կողմն է, որովհետև ինչքան մեծերը կամա թե ակամա մտրեանում են խնդրին, այնքան թուլանում է Թուրքիան:

Միս այս վիճակում, որպեսզի իրականացվի աշխարհի միաբերեղ կառավարումը, մշակվեց Ռուսաստանին Արաբական երկրներից դուրս բշելու մի ժողովրդավար ծրագիր, որին սկզբում փրվեց Մեծ Մերջավոր Արևելքի, ապա Արաբական գարունն անվանումները:

Պատահական չէ, որ այսպեղ ի կատարումն չբզկվելու ծրագրերի, Թուրքիային ներգրավվեց իր հավատարկիցներին սրի առաջ կանգնեցնելու քաղաքականության դիրքերում: Իրաքի, Աֆղանստանի, Լիբիայի, Թունիսի, Ալժիրի, Եգիպտոսի արաբները երբեք կնոռանա՞ն այն ծառայությունները որ իրականացրեց իրենց հավատարկից երկիրը: Դժվար թե: Այդ երկրները երբ ուրբի կանգնեն, կնշանակի այդ գարուն անվանվածը վերածվելու կատարյալ դժոճը հանդիսացող չնոռն: Ժողովուրդների հիշողությունը երբեք չի խամրում: Գարնան առաջին փուլում, չեղք բերված նվաճումներին այսօր երդարքի մանապարհ են բռնում: Նորից վերականգնվում է իսլամական կանոնակարգը, այդ երկրները դանդաղ ներգրավվում են սեփական արժանապատվության, կորցրածը երբ բերելու դիրքերում, մի նպատակամղում, որի սուր ծայրը ուղղվելու է այդ իրականացումներն ու արյունահոսությունը նախաշեղծողների դեմ, հարկապես կամակառարների, որոնց առաջին շարքում Թուրքիան է:

Այսինքն, Թուրքիային, չնայած շղարշված, դիմակավորված իր կեցվածքին, նորից մնում է մարդակեր երկիր: Եվ ինչպես իր հուշերում գրում

ՈՍԵՏՅԱՆԸ ՈՂՈՂՈՒԵՐԱԸ

ԳՐԱՆՆԱԿ

է, Կասպույր գրքին հեղինակներից մեկը՝ Ա. Թոյնբին. Մեծ հայրենի թուրք հանցագործները՝ Թալիաթը, Ջեմալը, Էնվերը և նրանց կամակառարները, թուրք ժողովրդի մի փոքր մասն էին ներկայացնում, սակայն նրանք հենց այդ ժողովրդից են սերվել: Ինչպես սասում են, մեկնաբանությունն ավելորդ է, որովհետև այսօր Թուրքիայում բացահայտվող ազգայնամոլական դուստրումները, որոնք շար կայուն աղերսներ ունեն կառավարական շրջանների հետ, դրա անժայռելի ապացույցներն են: Այսինքն, 1453 թվականից չեղավորված թուրքական մարդակերությունը, որը փորձ է արվում քողարկել, բացարձակապես կապ չունի կերպարանափոխության, ժողովրդի հոգեզան փոփոխության հետ: Միս այս իրավիճակն է, կամակառարությունը, որ Թուրքերին թույլ է փայխ մնալ այնպեղ, ուր իրենց փեղը չէ (Ա. Թոյնբի):

Երբեմն, երբեմն սապարեղում երեսացող Եվրոպական հակազդեղությունը Թուրքիային բերում է այն հետևությանը, որ չկան հավերժ բարեկամներ, որովհետև Թուրքիան իրականացնելով Եվրոպան խաղաղ նվաճելու ծրագիր Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Չեխիայում չեղվորեց թուրքական համայնքներ: Սա թուրքական ծրագրի առաջին փուլն էր, կամ Մեծ նախագծին սկիզբը: Սակայն այն չծառայեց իր նպատակին, որովհետև իսլամական կանոններից հրաժարված կամ մասամբ հեռացած այդ համայնքների անդամները, վաթսանե չբշվելու համար եվրոպականանում են:

Սեղ է, Թուրքիան արդեն կանգնում է մեծ խնդրի առաջ, քանզի Մեծ նախագիծն կոչվածը նպատակամղված էր նաև 70 միլիոն Թուրքիայի բնակիչների և չորս միլիոն Եվրոպա-

յում, մեկ միլիոն ԱՄՆ բնակվող թուրքերին ուրբի վրա պահել Թուրքիայի շահերի պաշտմանության, հայոց ցեղասպանությունը ժայռելու համար:

Այսպեղ պեղք է փորքիկ հաշվարկ կատարենք: 70 միլիոն թուրք հասկացությունը և ուռացած է և վիճարկելի, որովհետև հենց թուրքական Ռադիկալի օրաթերթի հաղորդմամբ, Թուրքիայում սպրում են 15 միլիոն թուրք, 12 միլիոն, ալաաի, բազմաթիվ աղբրեղանցի, լազ, չեքթեղ, եղդի և ... գրեթե 3 միլիոն մահմեդականություն ընդունած հայ, մահմեդականություն ընդունած, բայց ոչ մահմեդականացած: Նշված ժողովուրդները կազմում են գրեթե 35 միլիոն: Սեղ է, 70 միլիոնի կեղք թուրք չէ, բայց թուրքական հանրապետության օրենքով, բացի Լոզանի կոնֆերանսում մանաչված փորքամասնություններից, մնացածը համարվում է թուրք:

Համարվի, թե ոչ, պարկերը ավելի քան պարզ է, այն բարձրագույն հայտարարությունները, որ Թուրքիան միաչույլ, միական ժողովուրդ ունեցող երկիր է, իրականությանը չի համապատասխանում: Միս Մեծ նախագծին փապայման գլխավոր ազդակը: Սեղ է, կառավարական մակարդակով, երդվյալ թուրքերից կազմված կոմիտեները, փիրահոչակ Կիպրոսի թուրքական հանրապետության նախկին նախագահ Դենքաշի ոչ անհայտ գործիչ Դյուլգերի, և մի շարք այլ հեղինակությունների գլխավորությամբ չեն կարողանալու դիմակայել հայկական հարվածներին և նախագծի գլխավոր պայմանը մնալու է չիրականացված:

Ծրագրի հաջորդ ելակետը Հասարակի փնդեսական դժվարությունների խորացումն է, շրջափակման շարունակությունը: Այսպեղ ակնառու է մի զավեշտ, թուրքական վիճակագրությունը Հայաստանի նկատմամբ հեղվում է դարասկզբի

ՈՍԵՏՅԱՆԸ ՈՂՈՂՈՒԵՐԱԸ

(1920թ.) կեղծ տեղեկությունների վրա, որի հենիմակը հայակեր Կարաբեքի փաշան էր իր ահասարսուռ թուղիկներով, որոնց օգնությամբ փորձում էր կազմալուծել հայկական բանակը: Այստեղից էլ, թուրքերը, բանի որ հոգեբանորեն ու զարգացրած անհոգի Հայկական հարցում, վերադառնում են սկունք, սակ է հայկականության դեմ բացի սրից օգտագործելով բոլոր միջոցները:

Սակայն կա հարցի նաև մյուս կողմը. 1921թ. լինին-արալիկյան նվաճարարությունը Թուրքիային կցված Արդահանը, Կարսը, Սարիղամիշը, Իզմիրը, Կադզվանը, Նախիջևանը դադարեցրել են: Այս փարածքներում զլիսավորապես ապրող բրդերը հեռանում են վաթանից, բանգի զգում են քե իրենց մեղքը Հայոց 1920-րդ դարերի ցեղասպանությունների հարցում, քե այն բարձրորդի վիճակը, որ իրականացնում է թուրքական կառավարությունը:

Միս քե ինչու թուրքական մեջիսում՝ Արդահանից պարզամավորը հայրենիով, որ քաղաքը և շրջանը դադարեցրել են, հարցնում է, եթե որոշել էք Արդահանը հանչել Հայաստանին, ահա տեղեկացրեք, որ իմանանք մեր անելիքները:

Այսպես տեղեկական գործնով նախագծի այդ հարվածը ևս չգործեց: Մնում է խնամքով քարքարած Արրեջանական գործունը, Չավախքյան, ահարեկչությունը, հակահայկական քարոզարշավը, իսլամական ֆունդամենտալիզմով Հայաստանը շրջափակելը:

Մինչ այդ ճշգրտեմք մի խնդիր, որին մեր հանրությունը առավել մանրամասնությամբ տեղեկացված չէ: Ըստերը գիտեն Կարսի պայմանագրի մասին, սակայն քերը գիտեն, որ այն լրիվ բացահայտված չէ այն առումով, որ պայմանագրի որոշ կետեր հենց թուրք-ադրբեջանական

նկրպումների դեմ են: Բողոքելով, որ պես նախապայման առաջադրելով Կարսի պայմանագրի ճանաչումը Հայաստանի կողմից, թուրքական կողմը մոռանում է, որ Թուրքիան որ պես քարեկամական հարաբերությունների ապացույց, պարսավորվում էր բացել սահմանը, դիվանագիտական հարաբերություններ հաստատելով Հայաստանի հետ: Այստեղ պահանջելով, նախապայման դեռելով ճանաչել Կարսի պայմանագիրը, Թուրքիան կատարում է մեծագույն սխալ, և սկանա նպատակում Հայաստանի դիրքերի ամրապնդմանը, որովհետև և Ռուսաստանը և Թուրքիան 1921թ. միջազգայնորեն ճանաչված սուբյեկտներ չէին և նրանց կնքած Մոսկվայի, ապա և Կարսի Հայաստանի հետ կնքած պայմանագրերը միջազգային իրավունքից դուրս թողի կտրուներ են:

Ապա թուրքական փառապանծե դիվանագիտության խոշոր բացթողումը, որի արդյունքները անպայմանորեն պետք է օգտագործել: Մինչ այսօր, սկսած 1921թ.-ից, Հայաստանի նկատմամբ իրականացվող քաղաքականությանը Թուրքիան է խախտում Կարսի պայմանագիրը և պահանջել այն ճանաչել անհեթեթություն է:

Միս նախիջևանյան թնջուկը: Չեղյան հայրաբարելով 1920թ. Գյումրիի պայմանագիրը, հարկապես նրա 1-ին, 2-րդ հոդվածները, Կարսի պայմանագիրը Նախիջևանի հովանավորության հարցում խախտում է Կարսի պայմանագիրը, որը, ի դեպ, բոլշևիկյան Ռուսաստանը ևս դեմ է հովանավորությունը Արրեջանին հանչելու որոշմանը, ավելին, բացահայտել այն հարցը, քե թուրքական գործերը Նախիջևան են մտել բնակչության խնդրանքով, այն դեպքում, որ այնտեղ բնակչության կեսից ավելին հայեր էին և նման խնդրանք չէր լինի: Ավելին, ըստ ռուսական

կողմի, եթե եղել է անգամ խնդրանք կամ հրավեր, ապա այն չէր կարող հիմք հանդիսանալ ներխուժման, առավել ևս հովանավորության բաշխման, որովհետև գոյություն ունեցող 1920թ. օգոստոսին Մոսկվայում թուրք-սովետական համաձայնագրի կարմիրն գիծը:

Միս այսպես Կարսի պայմանագիրը դուրսարժուկի հեղքերով, հեղքելով մեծ եղբայր հորջորջվողի գործելակերպին, հայկական հեղքերը վերացնելու նպատակով իրականացվեց 21-րդ դարի զարհուրելի մշակութային եղեռնը՝ Ջուղայի խաչքարերի ոչնչացումը:

Վրաստանի հզորացմանը նպաստող Թուրքիային էժանագին տոնարակներ ու գովեստներ շտայելով Վրաստանի նախագահին, ուշ ուշով հեղքելով նրա ԱՄՆ, քաղաքանույթ և համախափի այցելություններին, քաջապետյակ լինելով, Վրաստանին ոգեկոչում է Չավախքյան խնդրում կոչը դիրքերի իրականացման, նպատակ ունենալով լուծել կարևոր խնդիրներ. նախ սրել հարաբերությունները Հայաստանի հետ, վերջինիս դրդել հայրենակիցներին զինական պաշտպանության, փարածքը դարչնել թուրք մծիթքցիների նոր վաթանե, և ամենակարևորը, իշխող դիրք ձեռք բերել Բաթումի և Փոթի նկատմամբ, առաջնությունը խելով Ռուսաստանից:

Արխագիայի և Հարավային Օսեթիայի հարցում ռուսական դիրքորոշումը սրիպեց Թուրքիային նոր ծրագրեր մշակել Չավախքի խնդրում, որը դեռևս վերջնական տեսքի չի եկել և Վրաստանը այդ հարցում չափելով անգամ ԱՄՆ հավանությունը, գործում է սրալինյան սկզբունքներով, միշտ զգայուն և արթուն պահելով խնդիրը:

2005թ. ռուսական մամուլում հայրենված քննադատական հոդվածները, վերլուծաբանների եզրակացու-

թյունները, խոսում են այն մասին, որ խորհրդային կայսրությունից Ռուսաստանին ժառանգություն մնացած ԱԳՆ գործում է ժանկեպանց դիրքորոշումներով, նպատակով Անդրկովկասում Ռուսաստանի դիրքերի թուլացմանը նվազագույնը, Ռուսաստանին Անդրկովկասից վարելու, առավելագույն առումով: Այսինքն գործելով 20-րդ դարի չափորոշիչներով, ՌԴ ԱԳՆ կայուն և հաստատուն դիրքորոշում չի ցուցաբերում նաև փարածաշրջանում միակ ուզանվարական ընկերքը նկատմամբ, հարևանցիորեն նայելով Հայաստանի հետ կապված օրածունը խնդիրներին: Թուրքիայի նպատակը հայվրացական թնջուկի խորացումն է, որի արդյունքում Հայաստանը կներկայացվի որպես նոր ազրեսիայի հեղինակ, ինչը նպաստ կբերի նաև արցախյան խնդրի ադրբեջանամետ լուծմանը:

Նախիջևանյան կյանք, որին իշխանական բարձր նվիրելու կողմնակից էին Թուրքիան, ինչքան էլ զարմանալի է Ռուսաստանը, նաև առանց դերակատարության Հայաստանը, Իրանը, նշված երկրներին խոստանում էր բարի շարունակություն, նաև կամակատարություն, սակայն սրացվեց անսպասելի զիխվայր արդյունք: Նավթային գործունը դարչնելով հարաբերությունները ի նպատակ Արրեջանի լուծման, Բիխամ ցեղապետը փարքերություններ չի տեսնում գրոցակիցների հարցում և դեռևս 2004թ. Եվրոպական հանչանաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիին նախագորչացնում, որ որևէ հանչանաժողովից ակնկալիքներ չունի և 1.5 միլիարդ տոննա նավթով կլուծի հարցերը: Չայրացած ու զարմացած գրոցակիցը հայրաբարում է. նավթի հաշվին դուր կարող էք հարստանալ: Արդ պարզեք ևս մեկ կարևորագույն խնդիր: Այդ ինչպես պարահեց,

որ 1813, 1828 թթ. Իրանի հեպ կնքված ստորագրուցիչ (իրանցի պարսկականների գնահատականն է - Հ. Չ.) պայմանագրերից հետո, Ալբանիա, Արան և Շեքվան փարածքները, նրան կից Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններ, որպեսզի ցարիզմի հոգաբարձությանն պատճառով բնակեցվեցին Փոքր Ասիայի, Հյուսիսային Կովկասի 500 000 բախառական ցեղեր, որոնք խժոճելով հայկականությունը նպաստելու էին հայկական պետականության վերականգնման հայերի ջգրումների ոչնչացմանը, 1918թ. անվանակոչվեց Ադրբեյջան և չեղարկվեց որպես պետականություն: Այդ շրջաններ ազգային, կրոնական, մշակութային սերտ կապ ունենալով Հայաստանի և Իրանի հեպ, այդուհետև դադարապարկվելու էին գոյապայքարի դաժանությունը:

Այս բողոքական մեջ Կովկասի բաբարներին առաջինը կարող էր գուպել Ռուսաստանը, սակայն նրան չեղարկու էր համաշխարհային հեղափոխությունը արգահանել իրանական Ադրբեյջան, ասել է Փոքր Ասիա և իրանականացնել Միջերկրական ծով դուրս գալու ցարական ծրագիրը: Իրանը անհաշվեակապ վերաբերվեց խնդրին, առավել ևս Նախիջևանի հեպ կենդանի շփման հնարավորություն Կովկասի թուրքիային, իսկ ԽՍՀՄ կործանումից հետո բարեկամարար ընդունեց իր բաղաբական հալածանքների ենթարկվող թուրք կոչվածներին իր կրծքի վրա գոյացնելով շարոթակ ուռուցք:

Միայն կարգաբերված է և հիմա դիմակայության խնդիրներ են լուծվում, որպեսզի նորից Իրանը ելնելով իր նկատմամբ ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի հալածական վերաբերմունքից, Կեր չի կանգնում հարևան երկրում գոյապայքարի հորջանություն հայրենից իրանական ծագումով ազգերին, բալչններին, այլ ցեղային ու ազգային միավորումներին:

Այս քաղաքականության շարունակականությունը, բեժ պահելը, որ պարտավորվել են Թուրքիան ու Ադրբեյջանը, նպաստում է Իրանում անկայուն վիճակի չեղարկմանն ու պահմանմանը: Իրանը ունենալով ՌԴ և Չինաստանի պաշտպանությունը, առ այսօր կարողանում է դիմակայել փորձություններին:

Թուրքական Մեծ նախագծին այս հարվածը առավել փարողունակ է, որովհետև Թուրքիան առ այսօր դժգոհ է 1639թ. Դիարբեքի պայմանագրից և իրադարձությունների թուրքամեպ լուծման ընթացքում կփորձի իրականացնել թուրքալեզու ժողովուրդների սահմանակից դառնալու, Օսմանյան կայսրությունը վերականգնելու ծրագիրը: Իսկ Ադրբեյջանը կվերածվի Մեծ Կերություն, նոր սպառնալիք դառնալով Հայաստանի համար:

Այսօր նախագծի այդ հարվածը ևս անկարար է, ու անիրականանալի, որովհետև թուրքերը չեն կարողանում մոռանալ, որ մեծերը երբեք թույն չեն Կա Թուրքիայի առավել հզորացումը, քանզի Ռուսաստանը կարծես անարարքեր չէ այդ խնդիրների նկատմամբ և Կասպից ծով է մրցոել իր հզոր նավերից մեկը, իսկ Թուրքմենստանը միջազգային դադարան է դիմել Ադրբեյջանական զավթումները դադարեցնելու, վնասները հարուցելու համար:

Իսլամական ֆունդամենտալիզմը, որը նախագծի գործուն ճյուղերից մեկն է, չի կարող վնաս պարճառել Հայաստանին, քանզի այդ գաղափարախոսությունը անհնաառաջինը բախումների ու առնակարումների դաշտ կրեղափոխի Թուրքիային ու Ադրբեյջանին, այնպեսզի կարարելով քաղաքական, կրոնական ու գաղափարական հիմնափոխություններ:

Միակամ մոլուցքը, որով Կասպում է Թուրքիան, առայժմ դրական բան չի խոստանում Թուրքիա-

ՈՍԵՏՅԱՆԸ ՈՂՈՂՈՒԵՐԱԸ

յին, ՌԴ և Չինաստանը հասարակական են այս հարցում և օր-օրի ավելի են մեծացնում Թուրքիայի դիմակի բացվածքները, նրան ուղղորդելով հարևան երկրում արյունահեղության հիմնական դերակատարի պարսկականը:

Թուրքական նախագիծը Մեծ Մերչավոր Արևելքի ծրագրի թուրքական բաղկացուցիչը լինելով, մեծ քաղաքականության ոլորտներում թույլ կրա բազմաթիվ շեղումներ, որոնք բացահայտելով բարկված նպատակները, ավելի կմեծացնեն անկախության համար մարտնչող Միրայի և Իրանի նկատմամբ համակրանքը, քանզի այսպես անհամաչափություն կա, առաջնությունը շահելու պայքար կա Թուրքիայի և Իսրայելի միջև:

ԱՄՆ-ը ինչ դիրքորոշում կչեռնարկի, ՌԴ և Չինաստանը ինչ համարժեք քայլեր կնախաչեռնեն, ցույց կրա ապագան, իրադարձությունների հեպագա զարգացումները:

Արդ հեպարբրաշարժ է հայկական քաղաքականությունը նշված մարտահրավերների դեմ: Առ այսօր բարեբախտարար դրական արդյունք է արջանագրվում: Խնդիրը նրանում է, որ դիվանագիտություն հասկացությունը, որ քաղաքականության շարունակությունն է, նոր գործընկերներ է գրնում միջազգային ասպարեզում: Հայաստանը դուրս է գալիս մեկուսացումից և դիվանագիտական պայքարում սփյուռքահայության հերոսական կեցվածքի օգնությամբ շահեկան վիճակում հայրենիքում:

Դեռևս մեկ դար առաջ մեր մեծագույն պարմարան Ն. Արոնցը գրնում էր, թե քարոզական, դիվանա-

ԳՈՐԴ ԳՈՒԴՈՒԵՐԸ

գիտական, քաղաքական, փնդեհական խնդիրների առթիվ հարցերը կարող է բնականուն լուծում սրանալ, եթե խնդրի խորացմանն ու լուծմանը ներգրավվի նաև հայկական կապիտալը: Ավելին՝ Հայ ազգ և հայ հայրենիք՝ հավասար գաղափարներ չեն: Մեր հայրենիքն ավելի հեպանաց է, քան ազգը: Մեր երկիրը հազիվ հասած է զարգացման քաղքենիության ասպիճանին... եթե այք աժեեր արտասահմանի հայության հիմ և նոր աշխարհների կենտրոններում խմբված մեր ուժերին, կարող ենք պնդել, որ եթե հայ հայրենիքը աղքատ է, սակայն այդպես չէ հայ ազգը... պիտի հրապարակ հանվի, որ հայ հայրենիքի քաղաքական բախար սահմանելիս և նկարի ունենալով՝ նաև նրա վարարանդի որդիների ուժն ու կարողությունները: Նրանց ամբարած մրավոր ու նյութական հարստությունները, որ գլխավոր հենարաններն են լինելու մեր հայրենիքի վերականգնման և փնդեհական բարգավաճման... Հայ կապիտալը պիտի գլխավոր նեցուկը լինի Նոր Հայաստանի (բնդգծումը՝ Հ. Չ.):

Խորենացու Ռդրե-ից հեպո Ն. Արոնցի կրակը վերածնվող Հայրենիքի ամենօրյան ծրագիրը պեպք է լինի: Եթե դարեր շարունակ մարտել ենք գոյապահպանության համար, ապա այժմ հայության հավաքական ուժի, նրա զավակների նվիրվածության շնորհիվ, ճիշտ քաղաքական դաշտ չեղարկելու միջոցով, կիրականացնենք մեր դարավոր երազանքները, որովհետև բոլոր մեծե կոչված ծրագրերի ու նախագծերի դեմ ունենք բավարար ներուժ, կամք:

ՈՍԵՏՅԱՆԸ ՈՂՈՂՈՒԵՐԱԸ

ԳՈՐԴ ԳՈՒԴՈՒԵՐԸ





Զանի բերանումս լեզու կա, փորումս սիրտ,  
ես լեղապատառ ծեն կտամ՝ էդ ո՞ւմ վրա էք թուր  
հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ծանաչում...

\* \* \*


Կամիմ, պատրաստ եմ հոգուվ եւ մարմնով ի  
խաչ ելանել ի սիրոյ առ հայրենիս: Չէն այս  
ցնորք տղայական այլ հաստատ յոժարութիւն եւ  
փափագ առ կատարելոյ...

\* \* \*

«Հայ ազգը ոչ թրից ա վախենում, ոչ  
թվանքից, ոչ թոփից: Կրակն ես քցում, էլի իրա  
հավատին ա պաշտում, ծառին ես կախ տալիս,  
էլի իրա խաչն ա պաշտում»:

\* \* \*

Եւ այսուիետն ընդդեմ թշնամյաց մի ամբողջ  
դառնամ, պաշտպանեմ բոլոր տարեգիրներին՝  
չհուսաբեկվեն...



Թող քաջ գիտենան, ազգերը չեն մեռնում:  
Նվաստացած, ճնշված, նրանք սարսուռով  
կրում են պարտադրված լուծը և պատրաստում  
են իրենց հատուցումը, սերնդեսերունդ փո-  
խանցում ատելության ու թշնամանքի տխուր մի  
ժառանգություն:

ՀՈՒՄԻ ՊԱՊ ՎԵՆԵՂԻԿՏՈՍ  
15-ՐԴԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԹԻՎ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՃԱՌԻՑ

\* \* \*

- Չկա բացարձակապես միջազգային քա-  
ղաքականության մի սահման, որ եվրոպական  
դիպլոմատիան այն աստիճան անընդունակ  
եղած լինի ինչպես Արևելյան խնդիրն է:

ՖՐԱՆՑ ՄԵՐԻԼԳ

\* \* \*

- Ինչո՞ւ տեղահանության պատճառով այժմ  
հարյուր հազարավոր հայեր ցրված են բոլոր  
աշխարհամասերում... Վերջապես, ինչո՞ւ է հայ-  
կական հարցը հանդիսանում աշխարհի ամե-  
նամեծ խայտառակություններից մեկը:

1923Թ. ԼՈՂԱՆԻ ԿՈՆՑԵՐԱՆՍՈՒՄ  
ԱՆՉԼԻԱՅԻ ԱԳ ԼԱՍԱՐԱՐ  
ԶԵՐԶՈՆԻ ԵԼՈՒՑԹԻՑ



ԽԱՐՈՎՅԱՆԻ ՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ**  
**АРМЯНСКИЙ ВОПРОС**  
**ARMENIAN QUESTION**

**Արոլյանագիտական  
Հայագիտական  
հասարակական քաղաքական  
հանդես**

**1'2012**

**Գլխի իսրագիր՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԱՏԻՎՅԱՆ**  
**Պատասխանատու քարտուղար՝ ՍԱՄՎԵԼ ԿՈՍՅԱՆ**  
**Համակարգչային շարվածքը և չեափորումը՝**  
**ՆՈՒՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆԻ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

**Հրատարակում է Խ.Արոլյանի տուն բանգարանը**  
**Ծավալը 10.5 տպ. մամուլ: Տարին երեք համար:**  
**Տպարանակը՝ 500:**

**Նյութերն ընդունվում են էլեկտրոնային տարբերակով,  
չեն գրախոսվում և չեն վերադարձվում:  
Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների  
արտահայտած տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը  
«Հայկական հարց»ին պարտադիր է:**

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

**Հ ա Ր Ք Ե Լ Ի ը ն թ Ե ր ց ո ղ ն Ե ր**

**Հանդեսը տպագրվում է Խ.Արովյանի տուն թանգարանի  
սուղ միջոցների հաշվին:**

**Եթե կգտնեք, որ անհրաժեշտ է օգնության ձեռք մեկնել հանդեսին,  
Ձեր նվիրատվությունները կարող եք ուղարկել ներքոհիշյալ հասցեով.**

**ՀՀ, Երևան, Քանաքեռ, 2-րդ փողոց, 4-րդ տուն,  
Խ.Արովյանի տուն թանգարան ՊՈԱԿ,  
ՎՏԲ Հայաստանի բանկ Արարիկի մասնաճյուղ  
ՀՀ 16040014756900  
ՀՎՀՀ 00805568**

---

**Խմբագրության հասցեն՝  
ՀՀ, Երևան, Քանաքեռ, 2-րդ փողոց, տուն 4:  
Հեռ. 28-46-86, 28-16-87  
Էլ. փոստ՝ abovyan-1950@mail.ru**